

ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում
1914 թ. հունիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը
Տեսար 5 և 6: 1915 թ. օգոստոսի 14-ից մինչև 1915 թ. դեկտեմբերի 31-ը*

Բանալի բառեր - Թովմաս Նազարբեկյան, Մանազկերտ,
Անդրանիկ, Համազասպ, Քեռի, Դ. Աբացիև, Պ. Օգանովսկի,
Մ. Սիլիկյան (Սիլիկով), Ն. Յուդենիչ:

Թ. Նազարբեկյանի հուշերի 5-րդ և 6-րդ տետրերում ներկայացվում են 1915 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսների՝ համեմատաբար խաղաղ պայմաններում ռազմաճակատում տեղի ունեցած ոչ մեծ միջադեպերն ու բանակի մարտունակության բարձրացման նպատակով կատարված աշխատանքները:

Գեներալի հուշերը մանրամասն տեղեկություններ են պարունակում նաև այդ շրջանում Կովկասյան բանակի կողմից իրականացված ամրաշինական աշխատանքների մասին: Հակառակորդին մոլորեցնելու և սեփական ծրագրերը թաքցնելու նպատակով հրամայվեց իրականացնել լայնածավալ հողաշինական-պաշտպանական աշխատանքներ, կառուցել գորանոցներ ու հարակից շինություններ, որով պետք է ցուցադրվեր, որ ռուսները որևէ հարձակողական գործողություն չեն իրականացնելու, այլ ձմեռելու են արդեն գրավված վայրերում:

Հակառակորդի պլանները և դիրքերը պարզելու նպատակով իրականացվում էին նաև հետախուզական գործողություններ: Որպես հաջող գործողություն Թ. Նազարբեկյանը վկայակոչում է փոխգնդապետ Ա. Հովսեփյանցի ու նրա ենթակաների ձեռնարկումը, որի ընթացքում հաջողվում է գերել թշնամու 80 զինվոր ու սպա, որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ռուսական հրամանատարությանը:

Ռուսական հրամանատարությունը շարունակում էր կասկածանքով վերաբերվել ազգային կազմավորումներին և մասնավորապես հայ կամավորական խմբերին, որոնք Կովկասյան ճակատում տեղակայված ազգային ստորաբաժանումներից ամենամարտունակն էին: Իշխանությունները խուսափում էին հայ կամավորական խմբերը մեկ գորամասում կենտրոնացնելուց, նրանց հրետանի ու գնդացիների տալուց և նախընտրում էին տեղակայել ռազմաճակատի տարբեր տեղամասերում: Այս հանգամանքը, փաստորեն,

* Ընդունվել է տպագրության 2.03.2020:

գրկում էր հայ կամավորականներին ինքնուրույն գործողություններ ձեռնարկելու հնարավորությունից¹:

1915 թ. վերջին գեներալ Ն. Յուդենիչը նախատեսում էր ձեռնարկել հարձակողական գործողություն, որը նպատակ ուներ գրավելու Արևմտյան Հայաստանում թուրքական բանակի կարևորագույն հենակետ Էրզրումի ամրոցը: Որովհետև 1915 թ. հոկտեմբերին հայտնի էր դարձել, որ դաշնակիցները՝ անգլո-ֆրանսիական ուժերը, ցանկանում են վերջնականապես դադարեցնել Գալիպոլիի շրջանում արդեն ձախողված դեսանտային գործողությունը: Ինքնին հասկանալի է, որ դաշնակիցների հեռանալուց հետո օսմանյան հրամանատարությունն ազատված ուժերն ուղղելու էր Կովկասյան ճակատ, ուստի Ն. Յուդենիչը, չնայած ձմեռային պայմաններին, որոշեց նախահարձակ լինել: Այս ռազմական գործողությունների նախապատրաստմանն ուղղված քայլերի նկարագրությամբ էլ ավարտվում է Թ. Նազարբեկյանի հուշերի 6-րդ տետրը:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերը թարգմանությամբ տպագրվում են առաջին անգամ, առանց կրճատումների: Մեր միջամտությունները ներկայացված են ուղղագիծ փակագծերում: Բնագիրը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում:

Ռուբեն Օ. Սահակյան
Պատմ. գիտ. դոկտոր

Տետր 5

2 ապրիլի 1929 թ.
Թիֆլիս

1915 թ. օգոստոսի 14-ին Սանջանի ջոկատից Կովկասյան 2-րդ հրաձգ[ային] բրիգադի 5-րդ, 6-րդ և 7-րդ գնդերը Ախուլգինյան 261-րդ գնդով և 66-րդ հրետ[անային] բրիգադի² 6 թնդանոթներով փոխարինելուց հետո դրանց հրամայվեց իրենց հրետանիով գնալ հյուսիս և տեղակայվել Շավերան գյուղում:

Բրիգադի 3 գնդերի՝ Շավերան³ ժամանելուց մի քանի օր անց եկավ Կովկասյան 8-րդ հրաձգ. գունդը Կովկասյան 7-րդ հրաձգ[ային] գնդի գումարտակի ու Կովկասյան հրաձգ[ային] հրետ[անային] դիվիզիոնի թեթև մարտկոցի հետ և տեղակայվեց Շավերան գյուղից հարավ՝ Եփրատից ոչ հեռու՝ Խիզար-դուղու կյուղի մոտ: Այսպիսով, 4 տարի անց առաջին անգամ Կովկասյան 2-րդ հրաձգ[ային] բրիգադը հավաքվել էր իր ողջ կազմով:

3 գնդերի՝ Շավերան ժամանելուն պես ընտրվեցին դիրքեր, որոնք ստուգվեցին իմ և կորպուսի ճարտարագետի կողմից: Նախատեսվում էր կարճատև հանգստից հետո սկսել ամրացնել դիրքերը:

1 Տես Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, Գիրք Ա, Եր., 1996, էջ 479:

2 Դիվիզիա: Տես Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 г., Париж, 1933, էջ 236:

3 Տես նաև Շոքվերան կամ Շոլվերան:

Ինձ և շտաբի պետին իր մոտ կանչեց կորպուսի հրամանատարը: Մեկնեցինք ավտոմեքենայով: Ճանապարհը տանում էր դեպի Ղարաքիլիսա: Ղարաքիլիսայից մոտ մեկ վերստ չանցած՝ անհրաժեշտ էր գետանցել Եփրատ գետը ու հենց քաղաքի մոտ ևս մեկ գետակ: Թիկունքն ընդհանրապես կարգի բերված չէր: Ոչ մի տեղ կամուրջ չկար: Միայն օգոստոսին սկսեցին Եփրատի վրա կամուրջ կառուցել: Ի միջի այլոց, արդեն մեկ տարի էր, ինչ այդ շրջանը մերն էր: Ծանծաղուտները նույնպես նշված չէին: Ավտոմեքենայի վարորդը, չիմանալով ծանծաղուտի տեղը, խրվեց Եփրատ գետի ամենախոր մասը: Մեքենան դադարեց աշխատելուց: Իրավիճակը ծանր էր և ծիծաղելի: Սակայն, բարերախոտաբար, մոտակայքում կային գյուղացիներ իրենց գոմեշների հետ, որոնք մեր խնդրանքով մեզ դուրս բերեցին այդ ծանր վիճակից: Նրանք գոմեշների օգնությամբ դուրս քաշեցին ավտոմեքենան գետից: Քաղաքի [Ղարաքիլիսայի] մոտ գտնվող գետակը մենք հեշտությամբ անցանք:

Ղարաքիլիսա քաղաքը տեղակայված է մի ոչ մեծ բարձրության վրա: Քաղաքը հյուրընկալ տեսք ուներ: Կային մի քանի ոչ մեծ շինություններ: Փողոցը, որով մենք գնում էինք, բավականին լայն էր և լի էր կրպակներով: Չուգահեռ փողոցները նույնիսկ հավասար էին: Քաղաքն իր չափերով մեծ չէր: Այն լի էր մեր փոխադրամիջոցներով, համբարակային պահեստներով և լազարեթներով: Քաղաքում մեծ թվով զինվորներ կային:

4-րդ կորպուսի շտաբը տեղակայված էր Ներքին Դերաբիում⁶, որը գտնվում էր Ղարաքիլիսա քաղաքից մի քանի վերստի վրա: Գյուղը փոքր էր, և կորպուսի շտաբը տեղավորվել էր վրաններում: Ներկայացանք կորպուսի հրամանատարին, ծանոթացանք կորպուսի շտաբի նոր պետ, [կայսերական] շքախմբի գեներալ Մոլիվանիի հետ⁷: Ես նրան ճանաչում էի, երբ երիտասարդ սպա էր և ծառայում էր Կովկասյան զբեմադերական հրետանային բրիգադում: Կորպուսի հրամանատարը հայտնեց ինձ, որ մոտակա օրերին մտադիր է գնալ Ծավերան, որպեսզի հանդիպի հրաձիգների հետ, շնորհակալություն հայտնի նրաց մարտական գործողությունների համար և պարզևատրի: Դրանից հետո մեզ հրավիրեց շտաբ՝ ճաշի: Ծաշը ձգձգվեց: Հիշեցինք անցած մարտական գործողությունները, ինչի պատճառով ստիպված էինք վերադառնալ գիշերով, անտանելի ճանապարհով և մինչև տեղ հասնելը բավականին տանջվեցինք:

[1915 թ.] օգոստոսի 20-ին կորպուսի շտաբից ինձ փոխանցեցին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնական նամակը և ֆրանսիական «Միլիտեր» մեդալը: Նամակում նշվում էր, որ Գերագույն գլխավոր հրամանատարը⁸ ուղարկել է այդ մեդալը, որպեսզի այն հանձնվի Կովկասյան ռազմաճակատի արժանավոր սպային:

«Ձեզ համարելով բոլորից առավել արժանի՝ ուղարկում եմ այս մեդալը և ավելացնում, որ Գերագույն գլխավոր հրամանատարն այդ մեդալը կրում է Գեորգիևյան 4-րդ աստիճանի խաչի կողքին»:

6 Տե՛ս նաև Ներքին Դարաբի:

7 Մոլիվանի Զախարի Ապանի (1867-1933)՝ իշխան, գեներալ-մայոր: Ավարտել է Գլխավոր շտաբի Նիկոլայան ակադեմիան: Պատերազմի սկզբում Երիվանյան 13-րդ լեյբ-գվարդիական գնդի հրամանատարն էր (31.05.1912-07.04.1915), որից հետո գտնվել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի տրամադրության տակ (07.04.-18.07.1915), ապա եղել է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբի պետ (18.07.1915-20.03.1917):

8 Այդ պաշտոնը զբաղեցնում էր գեներալ-համհարզ Նիկոլայ Ռոմանովը (1914 թ. հուլիսի 20-ից մինչև 1915 թ. օգոստոսի 23-ը):

Գլխավոր հրամանատարի՝ այդպիսի բովանդակությամբ նամակը, ինչպես նաև սպաների՝ ֆրանսիական բարձրագույն պարզևուկ պարզևատրվելը ինձ մեծագույն ուրախություն պարգևեցին: Նախագահական քարտի վրա ստորագրեցի մեղալը ստանալու մասին, որը, համաձայն հրամանի, ուղարկեցի կորպուսի շտաբ: Միաժամանակ անմիջապես պաշտոնական նամակ ուղարկեցի [Կովկասյան բանակի] գլխավոր հրամանատար Վորոնցով-Դաշկովին՝ խորին շնորհակալություն հայտնելով ինձ այդ մեղալով պարզևատրելու պատվին արժանացնելու համար:

Օգոստոսի 26-ին Շավերան եկավ կորպուսի հրամանատարը: Նրա այցելության համար Շավերան էր բերվել Կովկ[ասյան] 8-րդ հրաձգ[ային] գունդը: Բրիգադը [գունդը] շարվեց կորպուսի հրամանատարի գալստյան առթիվ: Նա եկավ ավտոմեքենայով իր համհարգի հետ: Նրան ընդունեցի զեկույցով: Շրջեց գնդերը, շնորհակալություն հայտնեց մարտական գործողությունների համար, զինվորներին բաժանեց Գեորգիևյան խաչեր ու մեդալներ, որից հետո գնդերն անցան նրա առջևով շարային քայլքով:

Ստուգատեսից հետո ես նրան հրավիրեցի պաշտոնական ճաշերույթի, որտեղ, իհարկե, ասվեցին բազմաթիվ ճառեր: Ես շնորհակալություն հայտնեցի նրան, որ վերջապես 4 տարի անց նա առաջին անգամ հնարավորություն տվեց բրիգադին հավաքվելու՝ այդ կերպ հնարավորություն տալով սպաներին ծանոթանալու միմյանց հետ: Մտավորապես ժամը 4-ին կորպուսի հրամանատարը վերադարձավ:

Օգոստոսի 28-ին հեռագիր ստացվեց, որ թագավորը ստանձնել է ողջ բանակի հրամանատարությունը⁹, իսկ Գերագույն գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլանիչը նշանակվել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և [Կովկասի] փոխարքա: Բոլորի համար ցավալի էր, որ փոխարքա Վորոնցով-Դաշկովը լքում է մեր երկրամասը և բանակը: Նա իր սիրալիրությամբ համընդհանուր սիրո էր արժանացել:

Շավերանում գտնվելու ժամանակ ինձ այցելեց Դրոն և նվիրեց բեռնակիր ձի: Ես խնդրեցի նրան հյուրընկալվել ինձ մոտ, սակայն նա շտապում էր: Որքան հիշում եմ, նրա հրամանատարությամբ կազմակերպվել էր երեք զորատեսակից բաղկացած փոքրիկ ջոկատ Ալաշկերտի հարավում գործող զինված քրդերի դեմ պայքարելու համար: Ինձ այցելեցին Կովկասյան հեծելազորային դիվիզիայի իմ մի քանի բարեկամները: Որոշ չափով կարգավորվում էր պարենի և համազգեստի ու կոշիկի մատակարարումը, որոնց կարիքը զինվորները շատ ունեին:

9 Որոշումն ընդունվել էր օգոստոսի 23-ին: Այդ պաշտոնում Նիկոլայ 2-րդը մնաց մինչև 1917 թ. մարտի 2-ը: 1915 թ. օգոստոսին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը, որը ցարի հրամանով իր պաշտոնը հանձնել էր Նիկոլայ Ռոմանովին (Նիկոլայ Կրտսեր), 1915 թ. օգոստոսին Նիկոլայ 2-րդին գրած նամակում զգուշացնում էր, որ նա վտանգավոր քայլ է ձեռնարկել՝ ստանձնելով զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնը, քանի որ ամեն մի անհաջողություն կապվելու է թագավորի անվան հետ: Ի. Վորոնցով-Դաշկովը, քաջ գիտենալով Նիկոլայ Կրտսերի մեծամտությունը և քինախնդրությունը, հարկ էր համարում զգուշորեն ահազանգել, որ Կովկասի նորաթուխ փոխարքան և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը վրեժխնդիր է լինելու, քանի որ փոխատեղումը կխոցի Նիկոլայ Կրտսերի ինքնապիրությունը: Ի. Վորոնցով-Դաշկովի գնահատմամբ՝ նոր նշանակումը հավասարազոր է այն բանին, որ տերտերին աստիճանագրվեն ու դարձնեն սարկավազ (տես **Красный архив**, Исторический журнал. Том двадцать шестой, М.-Л., 1928, էջ 123-124 http://istmat.info/files/uploads/32994/-krasnyy_arhiv_26-1928.pdf (մուտք 11.08.2019)): ժամանակակիցներից մեկը Նիկոլայ Կրտսերին անվանել էր «Породистый истукан» («Տոհմիկ կամ ազնվացեղ քարե արձան», որը նշանակում է «անտարբեր անձնավորություն»): Նշենք, որ Ի. Վորոնցով-Դաշկովն իրավացի էր. Նիկոլայ Կրտսերը չներեց պաշտոնի իջեցումը և 1917 թ. փետրվարին մասնակցեց Նիկոլայ 2-րդի գահագրկման առնչությամբ զինվորականների, քաղաքական ու պետական գործիչների կազմակերպած դավադրությանը:

Ընթանում էին դիրքերի ամրացման աշխատանքները: Գյուղերում կառուցվեցին բաղնիքներ: Բոլոր գյուղերն անամրոգաբնակ էին: Մարդիկ վերջապես կարողացան ազատվել մեծ թվով մակաբույծներից: Ցերեկը արևը տաքացնում էր, իսկ գիշերները ցուրտ էր:

Մեպտեմբերի 12-ին ստացվեց կորպուսի հրամանը. «Գաղտնի, N 3: 1915 թ. սեպտեմբերի 12-ի N 6 ողջ Կովկասյան կորպուսի հրաման: Քարտեզը՝ թուրքական 5 վերստանոց, Ներքին Դերաբի:

Տեղեկություններ հակառակորդի մասին: Խորասանից մինչև Միրկամիրի լեռնանցքը ձգվող ճակատում տեղակայված են IX կորպուսի 9 գումարտակներ, 17-րդ և 28-րդ դիվիզիաները, 32-րդ դիվիզիան՝ Ալի-բուկունի, Բայրակ-դար-Կեֆրի գյուղերում:

Չակմակ-դաղ լեռան արևելյան վերջավորությունից մինչև Սինաին-Կում գյուղը հակառակորդի ամրությունները ձգվում են Գամի-Կուպակ - Նազի - Կալենդուր - Շերոնին - Կունա - Համգա-Շեյխ - Կառա-ագիլ¹⁰ - Տոգոտ լեռ - Խալիս-թափասի գծով, որտեղ ամրացված դիրքերը սահմանակցվում են Կոփ-Խաչի գյուղ լճին-Բալաջան¹¹ լեռնաշղթային:

Շերոնին-կումի¹² - Կալենդուր¹³ - Նազի-Կուպակ տեղամասի հետևում, չստուգված զործակալական տվյալների համաձայն, Կուպակ-Կալենդուր-Համգա-շեյխ-Կարա-Քյոփի¹⁴ - Կոմա-Կարա-գյոզ¹⁵ շրջանում, որտեղ նախկինում կենտրոնանում էր 36-րդ դիվիզիան, իսկ ներկայումս Կուպակում են գտնվում 400 համադեականներ և Կոմա-Կարա-գյոզում հետևակի գումարտակ 2-3 թնդանոթներով և սուվարիի¹⁶ գունդ, Եփրատի ձախ ափին՝ Կոփ-Բուլանիկ¹⁷-Լիլ¹⁸-Ախլաթ շրջանում, որտեղ նախկինում կենտրոնացված էր Հալիլ բեյի հավաքական [բանակային] կորպուսը, ներկայումս գտնվում են՝ Լիլում՝ հետևակային գունդ ու հեծելազորային դիվիզիա, Ախլաթի շրջանում՝ քրդեր:

Այսպիսով, ներկայումս 1-ին կորպուսի ձախ թևի դիմաց թուրքերը կենտրոնացրել են մոտ 5 դիվիզիա: Այդ խմբավորումը, հատկապես՝ Չակմակ-դաղի շրջանում մի ամբողջ դիվիզիայի կենտրոնացումը, տեղակայման համար քիչ հարմար է, որը թույլ է տալիս ենթադրել, որ թուրքերը հավանաբար ցանկանում են հարվածել մեր բանակին Արաքս գետի աջ ափի և Շեյան-սու¹⁹ գետի հովտի ուղղությամբ 1-ին կորպուսի ձախ թևը շրջանցելով՝ Միրկամիրի լեռնանցքով 1-ին և 4-րդ կորպուսների միավորման հատվածում:

Տեղեկություններ մեր զորքերի մասին: Մեզանից ձախ՝ մինչև Միրկամիրի լեռնանցքը, տեղակայված է Կովկ[ասյան] 1-ին կորպուսը, Օլթիի ուղղությամբ՝ Թուրքեստանյան 2-րդ բանակային կորպուսը, իսկ Բաթումի ուղղությամբ՝ գեներալ Լյախովի

10 Ղարաաղլը կամ Խարաղլը (պատմ. Բերդակ) - Բուլանդխի հայկական գյուղերից:

11 Բլեջան:

12 Շարոյի գոմ:

13 Կալենդեր:

14 Կարաքյոփի կամ Խարաքյոփի - Խնուսի հայաբնակ գյուղ:

15 Գոմա կամ Քոմա Կարագյոզ, իմա՝ Կարագյոզի գոմ - Խնուսի ազգաբնակներից:

16 Թուրք՝ հեծելազոր:

17 Բուլանդխ:

18 Լիլ:

19 Շարյան կամ Շերիան, պատմ. Բագրևանդ - Արածանու աջ ճյուղը:

ջոկատը, մեզանից ձախ՝ Վանա լճի հյուսիսային ափին՝ Արճեշ քաղաքի մոտ, տեղա-
կայված են գեներալ Չեռնոգուբովի հեծյալ գորամասերը:

Կորպուսի առաջադրանքն է, բանակի հրամանատարի հրամանի համաձայն, 1-ին
կորպուսի ձախ թևի վրա թուրքական ճնշման և 1-ին ու 4-րդ կորպուսների միակց-
ման վայրում ճեղքելու փորձի դեպքում դիմագրավել՝ ամուր դիրքավորվելով Միրկա-
միրի լեռնանցքից հարավ-արևելք գտնվող լեռնաշղթայում՝ մինչև Չալո գյուղը՝ նրա-
նից դուրս գալով դեպի անանուն գետը, որը հոսում է Չորավա-Մոլլա-Օսման-Մամու-
տալ-Թուրդութ գյուղերով: Միաժամանակ կորպուսին հրամայված է ապահովել մեր
կողմից գրավված շրջանը մինչև Բուռնի-բուլաղի արևելքը ներառյալ և կապ պահպա-
նել գեներալ Չեռնոգուբովի Արճեշի ջոկատի հետ:

Նշված առաջադրանքի կատարման համար հրամայում եմ.

1. Գեներալ-մայոր Ամասիյսկու ջոկատին.

Գրոզնիի 262-րդ հետևակային գունդ՝	4 գումարտակ,
Գունիբի 263-րդ հետևակային գունդ՝	4 գումարտակ,
66-րդ հրետանային բրիգադի	6 թեթև և 4 լեռնային թնդանոթ,
3-րդ գծային կազակային գունդ՝	6 հարյուրյակ:

Ընդամենը՝ 8 գումարտակ, 6 թեթև ու 4 լեռնային թնդանոթ և 6 հարյուրյակ:

1) Ամուր կապ հաստատել Միրկամիրի լեռնանցքը գրաված 1-ին կորպուսի
գորամասերի հետ,

2) Հակառակորդի հարձակման դեպքում համառորեն պաշտպանել Միրկա-
միր լեռնաշղթայի դիրքերից մինչև Սեյդո գյուղ, որը փակում է հակառակորդի
մուտքը դեպի Շեյան-սու հովիտը: Հարձակման անցնելու դեպքում ապահովել
անցումը կիրճի վերը նշված անանուն գետից դեպի Կարա-յազի-դուզի բնասահ-
մանը՝ Մամուտալ - Մոլլա Բեքիր ճակատը,

3) Հսկել Ալիսիգ - Կավման - Խարա ճանապարհը,

4) Հետախուզությունը կատարել Չակմակ դաղի արևելյան լանջի, Նեֆրի -
գ. Սինանին կումի - Գամի - Ալուջար գյուղերի երկայնքով:

2. Գեներալ-լեյտենանտ Նիկոլանի ջոկատը.

261-րդ Ախուլգինյան հետևակային գունդ՝	4 գումարտակ,
66-րդ հրետանային բրիգադ՝	6 թնդանոթ,
Կուբանյան կազակ մարտկոց՝	2 թնդանոթ,

Հավաքական կազակ, դիվիզիոնն առանց Գծային²⁰ 3-րդ գնդի՝ 15 հարյուրյակ:

Ընդամենը՝ 4 գումարտակ, 6 թեթև թնդանոթ, 2 հեծյալ թնդանոթ և 15 հար-
յուրյակ:

1. Դիրքավորվելով Դենուն գյուղում և հեծելագործի մի մասը տեղակայելով
Մանազկերտ - Մոլլա բաղի - Կարա-կայա շրջանում՝ շարունակել հետախուզել
Գամ կուպակ - Գոմա²¹ - Կարազյոզ - Կոփ - Բուլանըլի - Ախլաթ ճակատը,

20 17-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը գծային գործը ցամաքային բանակի հիմնական զորատեսակն էր:
Ճակատամարտի վայրում գործը կանգնել է բարակ գծի տեսքով և կիրառել համազարկային կրակ: Հրագեծի
կատարելագործումից հետո այս մարտավարությունը գրեթե չի կիրառվել, սակայն հին անվանումը «գծային»,
շարունակվել է պահպանվել:

21 Քոմա:

2. Առաջապահ գործառնությունը գրավելով Մամանդը, Բուռնի-բուլարը և Պատնուր²², հակառակորդի հարձակման դեպքում համառորեն դիմագրավել Սանջանի դիրքերում: Պատնուսից կապ պահպանել Արճեշի ջոկատի հետ:

3. ա) Գեներալ-մայոր Նագարբեկովի կորպուսային պահեստագործը.
Կովկ[ասյան] 2-րդ հրաձգ[ային] բրիգադ՝ 12 գումարտակ,
Կովկ[ասյան] 2-րդ հրաձգ[ային] դիվիզիոն՝ 12 լեռն[ային] թնդանոթ:
Կենտրոնանալ Չելկանի - Խանազիր - Խոշյան²³ շրջանում՝ երկու գունդ ունենալով Խանազիրում:

բ) Գեներալ-լեյտենանտ Շարպանտիե.
Կովկասյան հեծելազորային դիվիզիա՝ 18 հեծելավաշտ, 6 հարյուրյակ, 4 հեծյալ թնդանոթ:

Մնալ Բաշիկ - Բավենի ուլյա²⁴ - Աշկա[լի] - Բեզիջի - Ալի արաբ շրջանում: Գեներալ Նագարբեկովի առաջին իսկ պահանջով նրա տրամադրության տակ ուղարկել Սևերսկյան 18-րդ դրագունյան գնդի 2 հեծելավաշտ:

4. Կովկասյան երկրորդ սակրավորական վաշտը տեղակայել կորպուսի ճարտարագետի հայեցողությամբ:

5. Հիմնական հեռախոսակայանները տեղակայել Ալաշկերտում, Շելխանում, Դերիկում, Ալխիգում²⁵, Նոխուդլում, Դենուկում: Շարժական N 4 կայանը տրվում է գեներալ Ամասիյսկու ջոկատին:

6. Առաջին շարժապահեստները տեղակայել դիվիզիաների ու բրիգադների պետերի հայեցողությամբ: Երկրորդ շարժապահեստները և սանիտարական հաստատությունները տեղափոխել կորպուսի հրետանու տեսուչի ու կորպուսի բժշկի կարգադրությամբ՝ ըստ նպատակահարմարության:

7. Կորպուսի համբարակապետի ենթակայության տակ գտնվող զինվորների նոր խմբավորմանը համապատասխան՝ ստեղծել առաջատար խանութներ զինվորներին հնարավորինս մոտ:

8. Բոլոր զորամասերը հրամանում նշված նոր վայրերը զբաղեցնելու են սեպտեմբերի 14-ի երեկոյան:

9. Ես և շտաբը մնում ենք Դերաբի սուֆլե²⁶ գյուղում, ուր պետք է ուղարկել շտապ զեկույցները առավոտյան ժամը 8-ին և երեկոյան ժամը 8-ին:

10. [Իմ] տեղակալներն են գեներալ-լեյտենանտ Շարպանտիեն և գեներալ-լեյտենանտ Նիկոլաևը:

11. Ջոկատների բոլոր հրամանատարներն ինձ ներկայացնելու են իրենց հրամանատարության տակ գտնվող ջոկատներին տրված հրամանները, իրենց տեղակայման նկարագրությունը, իսկ կորպուսի ճարտարագետին՝ բոլոր ամրությունների պլանը: Դիրքերի ամրացման աշխատանքների հաջողության մասին զեկույցել յուրաքանչյուր երեք օրը մեկ:

22 Բաղնոց:
23 Գյուղեր Ալաշկերտում:
24 Վերին Բավոնք:
25 Ալխես, Ալխըզ:
26 Ներքին Դարաբի:

Բնագիրը ստորագրել է կորպուսի հրամանատար, հեծելագործի գեներալ²⁷ Օգանովսկին»:

Կորպուսի հրամանի (1915 թ. սեպտեմբերի 12, N 6) համաձայն՝ Կովկասյան] 2-րդ հրաձգ. բրիգադի գնդերը դուրս եկան իրենց տեղակայման վայրերից այն հաշվարկով, որ սեպտեմբերի 14-ի երեկոյան լինեն նշված վայրերում: Կովկասյան] 5-րդ հրաձգ[ային] գնդին, հրետ[անային] դիվիզիոնի կառավարմանը և բրիգադի շտաբին նշանակվել էր Ալաշկերտի հովտում գտնվող Չելկանի գյուղը, 6-րդ գնդին՝ Խոշյան գյուղը, 7-րդ և 8-րդ գնդերին՝ Խանազիր գյուղը՝ յուրաքանչյուր գնդում ունենալով մեկական մարտկոց:

Իրենց հին բանակատեղերում գնդերը հասցրել էին կառուցել բաղնիքներ և այլ հարմարություններ, որոնք որոշ չափով թեթևացնում էին ինչպես սպաների, այնպես էլ զինվորների արշավային ծանր կյանքը, ուստի դժվար էր հեռանալ արդեն հարազատ դարձած վայրերից:

Ես շտաբի հետ շարժվեցի 5-րդ գնդի հետ: Չելկանի հասանք ուշ, երբ արդեն մթնել էր: Անցումը 30 վերստից ավելի էր, իսկ մյուս գնդերը ստիպված էին ավելի շատ անցնել: Իհարկե, հանդիպող գետակներից մի քանիսը բավականին խորն էին, ստիպված էինք անցնել ծանծաղուտով: Ոչ մի տեղ կամուրջներ չկային: Քանի որ սկսել էր բավականին ցրտել, հատկապես՝ գիշերները, իսկ մարդիկ դեռևս ամառային համազգեստով էին, այդ պատճառով ցուրտը նրանց համար բավականին զգալի էր, ուստի հրամայվեց գետնափոր տնակներ կառուցել: Դրա համար շինանյութը (փայտ, ապակի, երկաթյա վառարաններ և այլն) աստիճանաբար բերվում էր Ղարաքիլիսայից՝ ճարտարագիտական պահեստից: Տրվեցին երկթեք տանիքներով գետնափոր տնակների գծագրեր:

6-րդ, 7-րդ և 8-րդ գնդերն ավելի ճիշտ վարվեցին բնակիչների կողմից լքված շինությունները հարմարեցնելով մարդկանց ու ձիերի համար:

Քանի որ բրիգադի զորամասերում եղած հին գումակը ցրված էր զգալի տարածության վրա գտնվող ստորաբաժանումներում, և մատակարարման գլխավոր բազան՝ ք. Երևանը, հեռու էր, ուստի հրամայվեց առկա գումակի համար յուրաքանչյուր զորամասում ունենալ բեռնակիր գումակ: Դրա համար յուրաքանչյուր գնդից և հրետանուց նշանակվեցին մեկական սպաներ ու գնդապետ Աֆանասևի գնդից մեկ շտաբ-սպա և ուղարկվեցին Երևան՝ եզներ գնելու համար: Այդ գումակը զգալիորեն թեթևացրեց զորամասերի մատակարարումը:

Փայտը և այլ նյութեր, ինչպես, օրինակ, ապակին, երկաթե վառարանները, տրվում էին ք. Ղարաքիլիսայի ճարտարագիտական գերատեսչության կողմից. այնտեղ էին գտնվում նաև համբարակային պահեստները: Տեղափոխումը պետք է կատարեին զորամասերը իրենց միջոցներով: Չարմանայի էր այն, որ կորպուսն ուներ այդպիսի ձգված բազա (մատակարարման աղբյուրը քաղ. Երևանում էր և կատարվում էր Իգդիրով), և, չնայած այն հանգամանքին, որ Ալաշկերտի հովիտն արդեն մեկ տարի էր, ինչ մերն էր, չէր կառուցվել երկաթուղի կամ նեղուղի երկաթուղի²⁸: Ասում են, որ մի-

27 Հեծելագործի գեներալ՝ բարձրագույն զինվորական կոչումներից Ռուսական կայսրությունում:

28 Պատերազմի ժամանակ ավելի ծեռնուտ էր կառուցել նեղուղի երկաթգծեր, որոնք հնարավորություն էին տալիս արագ տեղափոխելու ոչ միայն կենդանի ուժ, այլև ռազմական պաշարներ: Նման երկաթգծերն ավելի էժան էին և

ջոցներ չեն հատկացվել, սակայն ես չգիտեմ, թե դա որքանով է ստույգ: Նման ճանապարհի անցկացումը, հաշվի առնելով տեղանքի ռեյինֆը, որևէ հատուկ դժվարության չէր հանդիպի, որը և ապացուցվեց հետագայում՝ 1916 թվականին: Ցավոք այդ մեկ տարվա ընթացքում բավականին մարդկային ու կենդանական ներուժ էր ապարդյուն ծախսվել:

Գետնափոր տնակների պլանը տրվել էր ճարտարագիտական հաստատության կողմից: Պարզվեց, որ դրանք չեն համապատասխանում տեղական պայմաններին, քանի որ հաշվի չէին առնվել խիստ կլիմայական պայմանները՝ առատ ձյունը և վառելիքի բացակայությունը: Ավելի ճիշտ կլիմեր կառուցել ոչ թե մեծ գետնափոր տնակներ, ինչպես առաջարկում էր ճարտարագիտական հաստատությունը, այլ փոքր: Բրիգադի շտաբը նպատակահարմար գտավ կառուցել մարդու հասակին հասնող քարե պատեր (քարի առատ պաշարներ կային), որից հետո դրանք դրսից ու ներսից պատել կավով: Տանիքները ծածկվեցին եղեգով, որն առատ էր գետի ափին: Այդ ձևով մի քանի շինություններ կառուցվեցին շտաբի սպաների ու զինվորների համար: Նույնիսկ կառուցվեցին ճաշարաններ՝ սպաների ու զինվորների համար:

Ես կորպուսի հրամանատարին հարցրի՝ ձմեռելո՞ւ ենք արդյոք Չելկանիում. եթե այո, ապա ես կսկսեմ իմ և պետական ծառաների համար մի փոքրիկ սենյակ կառուցել: Նա ինձ ասաց, որ մենք ձմռանը մնալու ենք Չելկանիում, որից հետո ես սկսեցի միաթեք կտուրով սենյակի կառուցումը: Շինությունն այնքան էլ մեծ չէր, սակայն բավականին տաք էր՝ շնորհիվ չթրծված աղյուսից պատրաստված գալանկայի²⁹:

Բրիգադի տարածքում գտնվող գրեթե բոլոր գյուղերը դատարկ էին. կային ընդամենը մի քանի բնակիչներ: Դրանցից մի քանիսում կային հայերին պատկանող փոքրիկ կրպակներ:

Սեպտեմբերի վերջին, օրը չեմ հիշում, ինձ տեղեկացրին, որ Չելկանիում առևտուր անող երկու հայերի դանակահարել են. մեկը տեղնուտեղը մահացել է, իսկ մյուսը մի քանի ժամ ապրել է: Հետաքննության ժամանակ մահացողը հայտնել էր, որ կողոպտիչները երկու զինվորներ էին: Քանի որ գյուղում տեղակայված էին մի քանի ստորաբաժանումներ, ուստի ենթադրվեց, որ հանցագործությունը կատարել է այդ կրպակի հարևանությամբ գտնվողներից մեկը:

5-րդ գնդի հրամանատարն առաջարկեց բերել իր գնդում գտնվող խուզարկու շների: Նա միայն կասկածում էր, որ վաղեմության պատճառով շները հոտառությամբ չեն կարողանա գտնել մեղավորին: Ես հրամայեցի բերել: Բերեցին շներին: Նրանք սկսեցին հոտոտել սպանված մարդկանց ու նրանց իրերը, որից հետո շներից մեկը շարժվեց 5-րդ գնդի տեղակայման վայրը: Մենք գնացինք նրա հետևից: Շունը մոտեցավ սպասյակների վրաններից մեկին: Նրան ներս թողեցին: Նա մոտեցավ այն տեղին, որտեղ պառկած էր կազանյան թաթարներից մի սպասավոր, և որտեղ նրա իրերն էին: Ներկա գտնվող սպան սկսեց պնդել, որ իր սպասյակն ազնիվ մարդ է և չի կարող նման հանցագործություն կատարել: Ես հրամայեցի ստուգել նրա իրերը: Ստուգման արդյունքում նրա շապիկի վրա գտնվեցին արյան հետքեր, որից հետո նա խոստովանեց ու հայտնեց իր հան-

²⁹ չին պահանջում շինարարական զգալի աշխատանքներ: Շոգեքարշները և վագոնները սովորականից ավելի փոքր էին:

29 Այդպես էին անվանում հողանդական վառարանները:

ցակցի անունը: Հանցագործության նպատակը կողոպուտն էր: Շան բացահայտումն ուժեղ ազդեցություն ունեցավ այդ տեսարանին ներկա զինվորների վրա:

Կորպուսի հրամանատարի կարգադրությամբ Կովկասյան] 6-րդ հրաձգ[ային] գունդը Խոշյան գյուղից տեղափոխվեց ք. Ալաշկերտ:

Բրիգադի գնդերը ողջ կազմով հերթով գնում էին առաջնագիծ, որտեղ տեղակայված էին 66-րդ հետևակային դիվիզիայի գնդերը (Գունիքյան և Գրոզնիի գնդերը), իրամատներ փորելու: Այսպիսով, այստեղ էլ Կովկասյան] 2-րդ հրաձգ[ային] բրիգադի գնդերի համար լիակատար հանգիստ չկար, չնայած նրանք գտնվում էին կորպուսի պահեստագործում: Ստիպված էին մեծ անցումներ կատարել և գլխավորը՝ այնտեղ ապրել արշավային վրաններում. ցուրտ եղանակային պայմաններում: Ճիշտ է, դեռևս ձյուն չկար, սակայն գիշերները զգալիորեն ցուրտ էր, իսկ մարդիկ դեռևս տաք հագուստ չունեին: Առաջնագծում գտնվող գործերն այդ տեսակետից ավելի լավ էին ապահովված: Նրանք ապրում էին գետնափոր տներում և համբարակությունն առաջին հերթին նրանց էր ապահովում տաք զգեստով: Աշխատելն էր արդեն հեշտ չէր, քանի որ հողի վերին շերտն արդեն սառել էր:

Կովկասյան] 6-րդ հրաձգ[ային] գնդի՝ Խոշյան գյուղից ք. Ալաշկերտ տեղափոխվելուց հետո ես գնացի այնտեղ՝ ստուգելու, թե ինչպես է տեղակայվել գունդը: Քաղաքը մեծ չէր, չնայած շատ հին էր, տեղակայված էր լեռան ստորոտին, բավականին գեղեցիկ էր և նույնիսկ ասիական մյուս քաղաքների համեմատ բավականին մաքուր: Տները փոքր էին, սակայն պատուհաններով, միայն գորանոցային շինություններն էին մեծ: Գունդը տեղակայվել էր բոլոր հարմարություններով՝ ոչ մի կերպ չնեղելով բնակիչներին, քանի որ քաղաքում շատ քիչ բնակիչներ էին մնացել: Խանազկրի, Ալաշկերտի և Չելկանիի միջև կառուցվել էին ճանապարհներ, և քարե ցուցանշաններ էին դրվել, եթե ճանապարհները ծածկվեին ձյունով:

Բրիգադի լազարեթը տեղավորվել էր Մոլլա Օսման փոքրիկ գյուղում, որը գտնվում էր Չելկանիից ք. Դարաքիլիսա տանող ճանապարհին: Այնտեղ նույնպես ձմեռային շինություններ էին կառուցվում հիվանդների համար: Տեղի շինությունները հարմար էին դրա համար, իսկ հիվանդների թիվը զգալիորեն աճում էր: Շինարարության համար օրինակ վերցրել շտաբային շինությունները, այսինքն, չխորանալով գետնի մեջ, պատերը կառուցում էին քարերով:

Մի քանի անգամ կորպուսի հրամանատարը ավտոմեքենայով եկավ բրիգադի գնդերը և մեզ մի շարք ցուցումներ տվեց, հատկապես՝ գետնափոր տնակների կառուցման մասին: Ինձ առաջարկեց ինձ համար տուն կառուցել, սակայն ես շնորհակալություն հայտնեցի նրան՝ ասելով, որ ես արդեն մի փոքրիկ սենյակ ունեմ՝ առանց ծախսերի և իմ պլանով կառուցված: Կորպուսի հրամանատարը Դերաքիում կառուցել էր երեքսենյականոց տուն: Կորպուսի ճարտարագետի խոսքերով՝ այդ տան կառուցումը արժեցել է 30.000 ռուբլի: Այն ամբողջությամբ կառուցվել էր գերաններով և տաշած բարակ տախտակներով: Ես այդպիսի ծախսը համարում էի անօգուտ և անմիտ: Միշտ էլ կարելի է հարմարեցնել որևէ շինություն՝ մի քանի ամսվա բնակության համար, ինչի համար անհրաժեշտ կլինի ոչ մեծ գումար:

Հոկտեմբերի վերջին ինձ Դերաքի կանչեց կորպուսի հրամանատարը: Ես մեկնեցի իմ շտաբի պետի հետ և, անցնելով Մոլլա Օսման գյուղով, դիտեցի հիվանդների համար նախատեսված նոր կառույցները: Շինությունները շատ լավ էին կառուցված, լու-

սավոր էին, սակայն, ցավոք սրտի, չէին չորացել, ուստի և սարսափելի խոնավ էին Հրամայեցի մարդկանց ժամանակավորապես դուրս բերել և անհապաղ պատերը չորացնել երկաթյա վառարաններով:

Դերաբիրում ներկայացա կորպուսի հրամանատարին: Նա բնակվում էր իր համալ կառուցված նոր տանը: Դա իսկական տուն էր՝ իր բոլոր հարմարություններով: Կորպուսի հրամանատարը հայտնեց, որ հրամայված է բրիգադի հենքի վրա կազմել դիվիզիա, այսինքն՝ յուրաքանչյուր գնդին ավելացնել չորրորդ գումարտակը, բացի այդ՝ սպասվում է Գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլաևիչի ժամանումը: Նրանից հետո ես հանդիպեցի [կորպուսի] շտաբի պետ Մդիվանիին, որից հետո մենք գնացինք կորպուսի շտաբի ճաշարան՝ ճաշելու: Ներս մտնելիս ականատես եղանք, որ շնորհավորում էին կորպուսի հրետանու տեսուչ Անդրուսկուն³⁰ Կոփի մարտերի համար Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվելու կապակցությամբ: Ես էլ միացա շնորհավորանքներին: Հենց այդ ժամանակ եկավ կորպուսի հրամանատարը ու հարցրեց, թե ինչ է պատահել: Ես պատասխանեցի, որ գեներալ Անդրուսկուն շնորհավորում եմ պարգևի արժանանալու կապակցությամբ: Դրան նա ասաց, որ Կոփի մարտերի համար ինձ՝ որպես իր կորպուսում ամենաարժանավորի, ներկայացրել է գեներալ-լեյտենանտի կոչման: Ցավոք, հետագայում պարզվեց, որ իմ ներկայացումն անհայտ կորել է կորպուսի շտաբում և այդ իսկ պատճառով չի հասել բանակի շտաբ: Ով էր դա արել, չնայած իմ բոլոր ջանքերին, այդպես էլ ինձ չհաջողվեց իմանալ: Այսպիսով, 4-րդ կորպուսում ես միակն էի, որ Կոփի մարտերի համար չարժանացա որևէ պարգևի:

Արդեն գեներալ Օգանովսկու հեռանալուց հետո, երբ նա գտնվում էր գավառային քաղաք Մինսկում որպես բանակի ժամանակավոր հրամանատար, 1916 թ. ես նրան նամակով դիմեցի՝ խնդրելով հայտնել, թե արդյոք նա ինձ ներկայացրե՞լ էր գեներալ-լեյտենանտի կոչման, քանի որ այդ ներկայացման հետքերն անգամ չկան 4-րդ կորպուսի շտաբում: Նա պատասխան նամակում հայտնեց, որ իսկապես ինձ ներկայացրել է և զարմացած է, թե ինչպես կարող էր այդ ներկայացումն անհետանալ, և որ բանակի հրամանատարի անունով հղած հեռագրով կվերականգնի այդ ներկայացումը: Հավանաբար չարակամ ինչ-որ անձ կար բանակի շտաբում:

Գնդերում չորրորդ գումարտակների կազմավորումն այնքան էլ մեծ աշխատանք չպահանջեց, քանի որ վաշտերում մարդիկ ավելի շատ էին, քան նախատեսված հաստիքները, ուստի կորպուսի հրամանատարի կարգադրությունից մի քանի օր անց չորրորդ գումարտակները գնդերում կազմավորվեցին, և այդ ամսին ես գեկուցեցի դեկավարությամբ: Դժվարություններ առաջացան հրետանու առնչությամբ: Անհրաժեշտ էր դիվիզիոնը վերածել բրիգադի, ուստի դա ձգվեց մինչև 1916 թ. գարունը:

Չեկանիում բրիգադի շտաբի և Կովկասյան] 5-րդ հրաձգ[ային] գնդի գտնվելու ժամանակ մեզ այցելեց անգլիացի սպա (ըստ երևույթին գնդապետ) Մարմանը, որը Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին էր կցված: Հրամայվեց նրան պատվով ընդունել: Ես դա հանձնարարեցի Կովկասյան] 5-րդ հրաձգ[ային] գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանևին, որն այդ գործի գիտակն էր: Նրան հանդիսավորությամբ

30 Անդրուսկի (Անդրուզսկի) Միտրոֆան Վասիլի (1855-1937)՝ գեներալ-լեյտենանտ (1917), Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչի պաշտոնակատար:

յամբ ընդունեց ողջ գունդը: Իհարկե, սովորության համաձայն, շատ ճառեր ասվեցին ինչպես մեր, այնպես էլ նրա կողմից՝ ի պատիվ մեր ու նրանց բանակների: Դրանից հետո նրան հրավիրեցին 5-րդ գնդի ճաշարան՝ ի պատիվ նրա կազմակերպված ճաշկերույթի: Կրկին մեծաթիվ ճառեր հնչեցին ինչպես մեր, այնպես էլ նրա կողմից: Ծաշից հետո լուսանկարվեցինք: Մեր բրիգադում, բացի [լուսանկարել] սիրողներից, կար լավ լուսանկարիչ, որը Թիֆլիսում լուսանկարչատուն ուներ: Եվ երեկոյան նա [անգլիացի սպան] հավանաբար գոհ մեկնեց:

Ք. Մոսկվայից մեզ մոտ՝ Չելկանի, եկան Քաղաքների միության³¹ անդամները նվերներով: Նվերների բաժանումը կատարվում էր հանդիսավոր կերպով, ինչի համար էլ շարվեց 5-րդ գունդը: Կրկին երկու կողմերից էլ ճառեր ասվեցին: Չինվորները շատ էին ուրախացել նվերներով: Նրանք մեզ մոտ մնացին երկու օր: Իհարկե, այդ օրերին կազմակերպվեցին հանդիսավոր ճաշկերույթներ՝ ճառերով հագեցած: Նրանք հավանաբար շատ գոհ մնացին ընդունելությունից ու գնդի տեսքից: Մոսկվա վերադառնալով՝ նրանք ինձ հեռագիր ուղարկեցին, որում շնորհակալություն էին հայտնում սիրալիք ընդունելության համար:

[1915 թ.] նոյեմբերի 19-ին ես շնորհավորական հեռագիր ստացա Գլխավոր հրամանատարի շտաբի պետ, գեներալ Բոլխովիտինովից ինձ Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակելու մասին:

Մի քանի օր անց հեռագիր ստացվեց, որ մեզ մոտ՝ Չելկանի, Գլխավոր հրամանատարի փոխարեն գալու է բանակի հրամանատար, գեներալ Յուդենիչը: Ես Խանազիրից ու Ալաշկերտից Չելկանի բերեցի դիվիզիայի գնդերը հրետանու հետ: Բանակի հրամանատարի գալու օրը դիվիզիան շարվել էր պահեստագորային կարգով: Նա ժամանեց ավտոմեքենայով կորպուսի հրամանատարի ու գեներալ Տոմիլովի³² հետ:

Նրանց ձիեր տվեցին, և երբ նրանք մոտենում էին դիվիզիային, ես մոտեցա նրան ու դիմավորեցի գեկույցով: Նրանք շրջեցին գնդերը, որից հետո դիվիզիան անցավ հանդիսավոր երթով: Ստուգումից հետո նա [Յուդենիչը], կորպուսի հրամանատարը և գեներալ Տոմիլովը հրավիրվեցին 5-րդ գնդի ճաշարան՝ ճաշի, որտեղ կենացներ ասեցինք միայն ես՝ ի պատիվ բանակի հրամանատարի և նա՝ ի պատիվ Կովկասյան 2-րդ հրաձգ[ային] դիվիզիայի: Ծաշից հետո լուսանկարվեցինք: Մեկնելիս բանակի հրամանատարը ինձ շնորհակալություն հայտնեց դիվիզիայի լավ վիճակի համար և մեկնեց կորպուսի հրամանատարի հետ: Այս ստուգայցի ժամանակ դիվիզիայի բոլոր գորամասերն առաջին անգամ տեսան իրենց բանակի հրամանատարին: Ընդհանրապես մեր ռազմաճակատը համարվում էր երկրորդական և հազվադեպ էին բարձրաստիճան պետեր այցելում:

Քանի դեռ 2-րդ հրաձգ[ային] բրիգադի և դիվիզիայի գնդերը տեղակայված էին Չելկանիում, Խանազիրում և Ալաշկերտում՝ որպես կորպուսային պահեստագոր, ողջ ընթացքում կատարվում էր ուժեղացված հետախուզություն, որպեսզի ճշգրիտ որոշվեն թուրքերի տեղակայման վայրերն ու ուժերը: Այսպես, համաձայն կորպուսի շտա-

31 1914 թ. օգոստոսին հիմնվում է Քաղաքների միությունը (Համառուսաստանյան քաղաքների միություն հիվանդների և վիրավոր ռազմիկներին օգնելու համար) խոշոր կազմակերպություններից մեկը, որն օգնություն էր ցույց տալիս կաթավարությանը: Թիկունքում կառուցել է հիվանդանոցներ, սանիտարական գնացքներ, սննդակայաններ, բաղնիքներ, կազմավորել բժշկական ջոկատներ և այլն: Կովկասում կազմակերպության մասնաճյուղի նախագահն էր Թիֆլիսի քաղաքապետ Ալեքսանդր Խատիսյանը:

32 Տոմիլով Պյոտր Անդրեյի (1870-1948)՝ գեներալ-լեյտենանտ, Կովկասյան բանակի թիկունքի պետ (02.1915-02.1918):

քի պետի հրամանի, Միրկամիրից Չուրավա³³ հետախուզություն կատարող Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հեծելաջոկատին աջակցելու նպատակով գեներալ Ամասիյսկու ջոկատի հեծյալ և հետևակ զորամասերն ուժեղացված հետախուզություն էին կատարում Չուրավա գյուղի ուղղությամբ: 263-րդ Գունիբյան գնդի կողմից ուղարկվեց 15-րդ վաշտը այդ գնդի հետախուզների խմբի, Գծային 3-րդ գնդի կազակների հետ և շտաբ-կապիտան Եմելյանովի հրամանատարությամբ: Վերջինս վերադառնալուց հետո ջոկատի հրամանատարին ներկայացրեց զեկուցագիր, որում այն աստիճան մանրամասն ներկայացրեց այ թևում հակառակորդի հետևակի տեղակայման նկարագրությունը, որ զեկուցման բնագիրն ուղարկվեց կորպուսի շտաբ: Կորպուսի հրամանատարը, ծանոթանալով շտաբ-կապիտան Եմելյանովի զեկուցագրին, հրամայեց շնորհակալություն հայտնել Գունիբյան գնդի հրամանատարին, շտաբ-կապիտան Եմելյանովին, բոլոր սպաներին ու զինվորներին:

Կորպուսի հրամանատարը պահանջեց անհապաղ գերի վերցնել, սակայն դա չէր հաջողվում առաջնագծում գտնվող զորամասերին: Ի վերջո այդ գործը ստանձնեց Գունիբյան գնդի փոխգնդապետ Արտեմ Հովսեփյանցը (Հայկական 1-ին դրուժինայի նախկին ղեկավարը³⁴): Նա իր հետ վերցրեց մեկ վաշտ, հետախույզների խումբը և մի քանի կազակների: Նախօրոք՝ հակառակորդի մարտական պահպանության անձնական ռեկոզնոսցիռովկայից³⁵ հետո, նա՝ որպես փորձառու ղեկավար, իր փոքրիկ ջոկատը գիշերով աննկատ տարավ հակառակորդի դիրքեր ու արշալույսին գերեց մարտական պահպանության մի մասը ուղեկալի հետ՝ սպայի հետ թվով մինչև 80 հոգի, և վերադարձավ իր ջոկատը աննշան կորուստներով: Այս փայլուն գործողության համար նա և բոլոր սպաներն ու զինվորները արժանացան կորպուսի հրամանատարի շնորհակալությանը ու ներկայացվեցին պարգևների:

[1915 թ.] սեպտեմբերի 28-ին գեներալ Ամասիյսկու կողմից առաջապահ ջոկատին տրվում է հետևյալ հրամանը. «Ռազմագերիների հարցումից, հետևակ և հեծյալ հետախուզությունից պարզվեց, որ հակառակորդի հետևակը տեղակայված է հետևյալ գծով՝ Չակմակ-դաղի արևելյան վերջավորությունից մինչև Ֆերնակու գյուղը, հրամայում եմ պահակային ջոկատներով անցնել պահպանության հետևյալ ճակատով՝ հսկելով Միրկամիր-դաղի հարավային գագաթից մինչև Դիլադիր-Քեկե-Մոլլա Օսման-Մոլլա Բեքիր-Կավման-Շիրմյան [գյուղերը], գնդի յուրաքանչյուր տեղամասում տեղակայել պահակային ջոկատ, որը բաղկացած կլինի գնդացիներով զինված գումարտակից և կազակների հարյուրյակից, սահմանագատելով պահպանության և հետախուզության գոտիներն անանուն գետի հոսանքով, որը հոսում է Ֆերնակիի մոտով Չուրավայի, Մոլլա Օսմանի միջով, իսկ Գրոզնիի գնդի պահակային ջոկատին՝ կապվել 1-ին կորպուսի պահպանության հետ, Գունիբյան գնդի պահպանությանը՝ Կովկ. 7-րդ հրաձգային] գնդի հետ, որը սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 1-ը պիտի խրամատներ փորի Չալո-Բաշե-Սամադ ճակատով:

33 Չորավա:

34 Հայկական 1-ին խմբի հրամանատարը եղել է Անդրանիկը: Ա. Հովսեփյանցը միայն Անդրանիկի բացակայության ժամանակ է փոխարինել նրան:

35 Տեղանքի մանրակրկիտ հետախուզություն, որը իրականացնում էր բացառապես հրամանատարը, սկսած վաշտի հրամանատարից մինչև բանակի հրամանատար, լրացուցիչ՝ ճշտումներ կատարելու համար:

Պահակային ջոկատներին հանձնարարում են պահպանությունը և մերձակա հետևակ ու հեծյալ հետախուզությունը վերը նշված շրջաններում:

Գծային 3-րդ գնդի հրամանատարին՝ 1) [մարտական] պահպանության յուրաքանչ-յուր ջոկատից առանձնացնել մեկական հարյուրյակ և դասակ Գրոզնիի, Գունիբյան գնդերի հրամանատարների համար և դիվիզիայի պետի պահակախումբը, մնացած երեք հարյուրյակները կենտրոնացնել Կովչան գյուղի շրջանում և այդտեղից հեռավոր հետախուզություն կատարել Ախտուշախ-թոփասի - Կարատաշ-թոփասի - Կազիբլի - Կոզլուտ-թոփասի շրջանում՝ շրջառելով հակառակորդի աջ թևը և թիկունքը:

2) Խորաի մոտ տեղակայել առանձին ուղեկալ՝ հրամայելով հետևել Խորա-Ալխիս ճանապարհին և կապ պահպանել գեներալ Նիկոլանի գորամասերի հետ:

Հաշվի առնելով ռազմաճակատի՝ չափից ավելի ձգվածությունը՝ [մարտական] պահպանության ջոկատների պետերի ուշադրությունը հրավիրում են պահակային ջոկատների կողմից առաջնագծի հսկողության վերջնական ընտրության վրա (Դաշտային կանոնադրության 183-րդ հոդված)³⁶, չսահմանափակվելով շրջանը միայն քարտեզով ուսումնասիրելով և օգտագործելով բոլոր շահավետ դիտակետերը:

3) Պահակային զորախումբը տեղակայել սեպտեմբերի 3-ին՝ ցերեկը ժամը 5-ին:

4) Հրամայում են գորամասերի հրամանատարներին լրջորեն վերաբերվել իրենց տեղամասերում հետախուզության կազմակերպմանը՝ նկատի ունենալով, որ ցանկալի արդյունքներին կարելի է հասնել ոչ թե հետախուզական ստորաբաժանումներն ավելացնելով, այլ ծածուկ ու հմտորեն մոտենալով հակառակորդի պահակակետերին ու խրամատներին գիշերով և հատկապես յուսաբացին:

Գերիներ վերցնելն անհրաժեշտ է, քանի որ միայն գերիների հարցաքննությամբ և նրանց հանդերձավորությամբ ու զինվածությամբ կարելի է բավականին ճշգրտորեն տեղեկանալ հակառակորդի այս կամ գորամասի գտնվելու վայրի մասին:

Իրիքերի ամրացման աշխատանքները, գետնափոր տնակների կառուցումը և շինությունները մարդկանց ու ձիերի համար հարմարեցնելը տեղի էին ունենում այն ժամանակ, երբ բերում էին պարագաները: Տեղական ղեկավարությունը, հատկապես՝ առաջնագծում, պատշաճ ուշադրություն չէր դարձնում այդ աշխատանքներին, քանի որ գտնում էին, որ շուտով առաջնագծից տեղափոխվելու են պահեստագոր: Այս հանգամանքի վրա ուշադրություն դարձրեց կորպուսի հրամանատարը: Նա եզրակացրեց, որ աշխատանքները պատշաճ թափով չեն ընթանում, ուստիև պահանջեց անհապաղ ներկայացնել բոլոր աշխատանքների հաշվետվությունը: Մի շարք վայրերում գետնափոր տնակների կառուցման համար ընտրվել էին շատ անհաջող վայրեր, ինչպես, օրինակ, Շեյխան գյուղի մոտ տեղակայված Գրոզնիի գնդում ընտրվել էր գետի ցածրադիր ափը, և երբ սկսվեցին անձրևները, այդ գետնափոր տնակները ջուր լցվեց: Ստիպված էին կրկին նոր գետնափոր տնակներ կառուցել: Անփութորեն կառուցելու հետևանքով տեղի էին ունենում դժբախտ պատահարներ: 66-րդ հետևակային դիվիզիայի գնդերից մեկում մի քանի գետնափոր տնակներ էին փլվել, և նույնիսկ մահացության դեպք էր գրանցվել:

36 Стб Уставъ Полевой службы. ВЪСОЧАЙШЕ утверждёнъ 27 апреля 1912 года, С.-Петербургъ, 1912, էջ 83/
<https://electro.nekrasovka.ru/books/6151428/pages/89> (մուտք 24.01.2020):

Կորպուսի հրամանատարը հանձնաժողով նշանակեց առաջնագծում կառուցված դիրքերը ստուգելու համար: Հանձնաժողովը անմխիթար արդյունքներ արձանագրեց և այդ մասին զեկուցեց կորպուսի հրամանատարին: Դրանից հետո կորպուսի հրամանատարը հրամայեց. 1) Առանց բացառության բոլոր խրամատների խորությունը համապատասխանեցնել մարդու հասակին, որտեղ որ պետք է, [պատել] հողով լի պարկերով: 2) Հատուկ ուշադրություն դարձնել փշալարե արգելափակոցներին: 3) Կառուցել դիտակետեր: 4) Անպայման կառուցել խրամատ, որի միջոցով կապ կհաստատվի առաջնագծի հետ, և կարգի բերել Գրոզնիի գնդի առջևում գտնվող լեռնանցքը: 5) Գունիբի գնդում գրոզնենցիների դիրքերի հետ կապ հաստատելու համար քարե անցկանների փոխարեն փորել խրամատներ Ուդյակ-բաբայից աջ՝ դեպի առաջ»:

Առաջնագծում 66-րդ հետևակ[ային] դիվիզիայի գտնվելու ժամանակ Գրոզնիի 262-րդ հետևակ[ային] գնդի պողպորուչիկ³⁷ Ռոսյակովն անբարենպաստ եղանակային պայմաններում, չափազանց կարճ ժամկետում կատարել էր առաջնագծի լայնարձակ շրջանի տեղագրական քարտեզագրում՝ 250 սաժեն³⁸ մեկ դյույմում³⁹ մասշտաբով: Քարտեզագրումը գերազանց էր արված:

Մշո դաշտից նահանջելիս դիվիզիայի գնդերը գյուղերից հավաքում էին լքված տղաներին: Գորովաշարժ տեսարան էր, թե ինչպես էին ոչ միայն առանձին մարդիկ, այլև ամբողջ վաշտերը վերաբերվում այդ երեխաներին: Չինվորներից շատերը հրաժարվում էին իրենց սուղ միջոցներից, միայն թե նրանց կոկիկ հագցնեին ու լավ կերակրեին: Երբ մշեցի ու վանեցի փախստականները հավաքվեցին Երևանում, Իգդիրում և Էջմիածնում, այդ օրերին լուրեր հասան, որ Կովկ[ասյան] 2-րդ հրաձգ[ային] դիվիզիայում զգալի թվով երեխաներ կան Մշո դաշտից: Այդ ժամանակ այդ վայրերի փախստականները եկան իրենց երեխաներին ու ազգականներին փնտրելու: Եկան նաև մեզ մոտ՝ Չելկանի: Ես ստիպված էի անձամբ քննել փախստականների արդարացի պահանջները և երբ հարցուփորձով համոզվում էի, որ նրանք իրավացի էին, հրամայում էի վերադարձնել երեխաներին իրենց ծնողներին ու ազգականներին: Եվ դա ինձ համար բավականին դժվար էր իրականացնել, քանի որ երեխաները բառացիորեն չէին ցանկանում գնալ ոչ միայն ազգականների, այլև հարազատների մոտ: Ներկաների համար ծանր էր նայել երեխաների ու զինվորների լացին: Ոմանց ստիպված էին ուժով նստեցնել սայլերը, իսկ ոմանց էլ զայրթակդում էին քաղցրավենիքով: Քանի որ գտնվեցին գրեթե բոլոր հայ երեխաների հարազատները կամ ազգականները, իմ վաշտերում մնացին միայն քուրդ երեխաները:

Այս գործում զգալի օգնություն ցույց տվեց Կովկասյան բանակի հայ քահանա Բեկգուլյանցը⁴⁰, որը գտնվում էր Չելկիանում՝ հայ զինվորների հոգևոր կարիքները քավարարելու համար:

Իմ ենթադրությունը, որ ձմռանը կմնամ Չելկանիում, չնայած կորպուսի հրամանատարի հավաստիացումներին, իրականացավ, այսինքն՝ ձմռանը ես պետք է իմ դի-

37 Ցարական Ռուսաստանի բանակում առաջին սպայական կոչումը:

38 1 սաժենը հավասար է 2,134 մետրի:

39 1 դյույմը հավասար է 2,54 սմ-ի:

40 **Բեկգուլյանց Ռուբեն Բարդուղիմեոսի** (1875-1935)՝ ավագ քահանա: 1914 թ. ուղևորվել է Արևմտյան Հայաստան: 1915թ. փետրվարից Կովկասյան բանակի հրամանատարության կարգադրությամբ նշանակվել է հայ զինվորների հոգևոր քահանա, որը հնարավորություն է տվել լինելու ռուս-թուրքական ռազմաճակատի տարբեր հատվածներում: Իր տալավորությունները պարբերաբար հրատարակել է Մոսկվայում լույս տեսնող «Армянский вестник» շաբաթաթերթում: Ահագնգել է ռուսների կողմից Հայ առաքելական որոշ եկեղեցիներ ուղղափառի վերածելու մասին:

վիզիայի հետ գրադեցնեն առաջնագծի դիրքերը, իսկ 66-րդ հետևակ[ային] դիվիզիան կգնա հանգստի: 1915 թ. նոյեմբերի 30-ին ես Կովկ. 4-րդ բանակային կորպուսի գորաշարժային պահեստագործին տվեցի հետևյալ հրամանը՝ N 4. «Պահեստագործի պետը հրամայեց հայտարարել 1915 թ. նոյեմբերի 29-ի N 12 հրամանի պատճենը ի զիտույթյուն Կովկասյան 4-րդ բանակային կորպուսին, Դերաբի ի Սուֆլե:

1. **Տեղեկություններ հակառակորդի մասին:** Թուրքական քարտեզ՝ 1 դյույմում 5 վերստ⁴¹:

Մեր կորպուսի առջև տեղակայված են՝ Բայրակ-դարի շրջանում՝ 29-րդ դիվիզիան, Կոմա-Կարա-գյոզի շրջանում՝ 5-րդ հավաքական դիվիզիան, 3-րդ աշիրեթական բրիգադը և սուվարիի⁴² 2 գունդ, և Լիր-Ախլաթի շրջանում՝ 36-րդ հետևակային ու 2-րդ հեծելագորային դիվիզիան:

Սարիդամիշի ուղղությամբ՝ IX և XI [բանակային] կորպուսները:

Օլթիի ուղղությամբ՝ X [բանակային] կորպուսը:

Մերձծովյան ուղղությամբ՝ 14 գումարտակ, տարբեր գորամասերի 10 թնդանոթ:

Վանի ուղղությամբ՝ 2 գումարտակ, 4 թնդանոթ և 3-4 հազար քրդեր:

Էրզրումում՝ 14-19 գումարտակ և 10-12 թնդանոթ, բացի ամրոցի հրետանուց

Մեր կորպուսի առջև հակառակորդն ամրացրել է դիրքերը Չակմակ-դաղ լեռան արևելյան վերջավորությունից մինչև Սինանին-կուլի - Կուլակ - Նազի - Կալենդուր - Շերենիկ-կուլի - Տագոժ - Խալիս թափասի լեռ - Խաչլի-գյոլ լճի - Բալաջան-դողաղիի հին ամրությունները:

2. **Տեղեկություններ մեր զորքի մասին:** Մեզանից աջ՝ մինչև Միրկամիրի լեռնանցքը ներառյալ, տեղակայված է Կովկ[ասյան] 1-ին [բանակային] կորպուսը, Օլթիի ուղղությամբ՝ Թուրքեստանյան 2-րդ կորպուսը, Պրիմորյան ուղղությամբ՝ գեներալ Լյախովի⁴³ ջոկատը:

Մեզանից ձախ՝ Վանի ուղղությամբ մինչև Արճեշը ներառյալ, տեղակայված է գեներալ Չեռնոզուբովի ջոկատը:

Պարսկաստանում է գեներալ Բարաթովի ջոկատը:

Բանակային պահեստագործը գտնվում է Կարսի և Կարակուրթի միջև:

3. **Առաջադրանք:** Մեր կորպուսը պետք է ամուր կերպով ապահովի գրավված շրջանը Միրկամիրի լեռնանցքից մինչև Բուրնիբուլակ ներառյալ, հակադարձի թուրքերի հարձակմանը 1-ին կորպուսի ձախ թևի վրա ու 1-ին ու 4-րդ կորպուսների միակցման հատվածը ճեղքելու փորձերին և կապ պահպանի գեներալ Չեռնոզուբովի Արճեշի ջոկատի հետ:

Առաջադրանքը կատարելու համար հրամայում եմ.

Ա. Գեներալ-մայոր Նազարբեկովի Դերիկի ջոկատ.

Կովկ. 6-րդ հրաձգ. գունդ՝

4 գումարտակ,

41 1 վերստը հավասար է 1,06 կմ -ի:

42 Հեծելագործ:

43 **Լյախով Վադիմիր Պլատոնի** (1869-1920)՝ գեներալ-լեյտենանտ: Պրիմորյան ջոկատի (Կովկասյան 1-ին բանակային կորպուս) հրամանատար: Միխայլովյան (Բաթումի) ամրոցի պարետ: 1916 թ. ապրիլին Չեռնոմորյան նավատորմի Բաթումի ջոկատի հետ մասնակցել է Տրապիզոնի գրավման օպերացիային: 39-րդ հետևակային դիվիզիայի (22.05.1916), ապա՝ Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար: Սպիտակ շարժման մասնակից: Սպանվել է Աջարիայում:

Կովկասյան] 7-րդ հրաձգ[ային] գունդ՝ 4 գումարտակ,
 Կովկ. հրաձգ[ասյան] դիվիզիոնի 2-րդ մարտկոց՝ 6 լեռն[ային] թնդ[անոթ] ,
 66-րդ հրետանային բրիգադի 6 թ[եթև.] թնդ[անոթ] ,
 Չեռնոմորյան 1-ին կազակ. գնդի 3 հարյուրյակ,
 Կարսի 2-րդ ամրոցի սակր[ավորական] վաշտ՝ 1 վաշտ,
 Դաշտային N 2 հեռագրակայան՝ 1 կայան
 Ընդամենը՝ 8 գումարտակ, 6 թեթև և 6 լեռնային թնդանոթներ, 3 հարյուրյակ, սակրավորական 1 վաշտ և կայան:

1) Հակառակորդի հարձակման դեպքում հակահարված տալ Միրկամիրի լեռնանցքից մինչև Բաշլե գյուղը ներառյալ:

2) Մոլլա-Օսման գյուղի շրջանում տեղակայել առաջապահ զորքի երեք տեսակներից, իսկ առաջապահից տեղակայել պահակային ծառայություն Կեկե գյուղ, Կենի - Սինի - Միրկա-խիլ գյուղերի գծով՝ ներառյալ Միրկամիրի լեռնանցքը:

3) Հետախուզությունն իրականացնել հյուսիսում մինչև Միրկամիր-դաղ - Չակմակ-դաղ լեռները և Միրկե-խիլ - Գամի գյուղերի ուղղությամբ:

4) Հաստատուն կապ պահպանել Միրկամիրի լեռնանցքը գրաված 1-ին կորպուսի զորամասերի և Մանջանի ջոկատի առաջապահ զորամասերի հետ:

Բ. Գեներալ-մայոր Պեվնևի⁴⁴ Մանջանի ջոկատ.

Կովկ. 8-րդ հրաձգային գնդի 4 գումարտակ,
 66-րդ հրետ[անային] բրիգադի 2-րդ, 3-րդ և 4-րդ մարտկոցներ՝ 12 թեթև և 6 լեռն[ային] թնդանոթներ,
 Լաբինսկյան 1-ին կազակ[ային] գունդ՝ 6 հարյուրյակ,
 Չեռնոմորյան 1-ին կազակ[ային] գնդի 4 գումարտակ,
 Թուրքեստանյան 9-րդ և 10-րդ ռազմահանգրվանային վաշտեր՝ 2 վաշտ,
 Հայկական 2-րդ դրուժինա՝ 1 դրուժինա,
 Բեռնակիր հեռագրակայաններ՝ NN 3-րդ, 4-րդ և 9-րդ կայաններ,
 Ընդամենը՝ 4 գումարտակ, 12 թեթև և 6 լեռնային թնդանոթներ, 6 գ հարյուրյակ, 1 դրուժինա և 3 [հեռագրական] կայան:

1) Հակառակորդի հարձակման դեպքում հակահարված տալ Բիշե գյուղից մինչև Աշադո-Կարա-հայիդ գյուղերի նակատով, պաշտպանել ձախ թևը մինչև օգնական ուժերի մոտենալը,

2) Երեք զորատեսակներից երկու առաջապահ ուղղել՝

ա) Առաջինը՝ Նախուղլի - Կարա-Աղաջ՝ 2 հարյուրյակ տեղակայելով Ղազիում, մեկ հարյուրյակ ու հետախույզների խումբ՝ Փիր-Մասյանում,

բ) Ջախ [թև.] Բուրնի-բուլակի շրջան՝ տեղակայելով 3 հարյուրյակ Բոստան-կայա-յում և 2 վաշտ ու Հայկական 2-րդ դրուժինան Պատնոցում,

3) Պահակային զորախումբը տեղակայել Միրկե-հիլ - Մոլլա-Ալի - Լալա դաղի լեռնաշղթա, Մանազկերտ - Սուլթանմուղ- Փիր-Օմար գծով,

44 Պեվնև Ալեքսանդր Լեոնտիի (1875-1936)՝ գեներալ-մայոր: Կազակային 2-րդ դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար (06.04.1914-1916): Կովկասյան հեծելազորային կորպուսի շտաբի պետ (04.07.1916): Կամավոր ծառայության է անցել Կարմիր բանակում: Խորհրդային Ռուսաստանի սահմանապահ զորքերի հրամանատար (1919 թ.): Ղասափանդե է Կարմիր բանակի ռազմական ակադեմիայում:

4) Հետախուզությունը կատարել՝ սահմանափակվելով հյուսիսում Մերկե-հիլ - Գամի և արևելքում՝ Չիրաքլի - Նորշեն գյուղերով, հատուկ ուշադրություն դարձնելով Կոմա-Կարա-գյոզի, Կոփ - Լիրի, Ախլաթ - Նորշեն ուղղություններին,

5) Կապ պահպանել Արճեշի ջոկատի հետ:

Գ. Իմ պահեստագործը.

ա) Գնդապետ Դոկուչան.

Կովկ. 5-րդ հրաձգ[ային] գունդ՝ 4 գումարտակ,
593-րդ դրուժինա՝ 1 դրուժինա,
Կովկ. 2-րդ հրաձգ[ային] հրետ. դիվիզիոնի 1 մարտկոց, 6 լեռն. թնդանոթ,
Կովկ. 2-րդ առանձին սակրավորական վաշտ՝ 1 վաշտ,
Ընդամենը՝ 4 գումարտակ, 6 լեռն[ային] թնդանոթ, 1 դրուժինա և 1 վաշտ:
Տեղակայված են Դերաբի-Սուֆլա-Ղարաքիլիսա, Չելկանի և Ալաշկերտի շրջա-

նում:

Դ) Գեներալ-մայոր Սավիցկու⁴⁵ 66-րդ հետևակ[ային] դիվիզիան, 16 գումարտակները տեղակայված են Կաղզվան- Կուլա⁴⁶ շրջանում,

Ե) Գեներալ-լեյտենանտ Աբացիև.

594-րդ դրուժինա՝ 1 դրուժինա,
595-րդ դրուժինա՝ 1 դրուժինա,
Կիզյարո-գրերենսկի 3-րդ կազակ[ային] գունդ⁴⁷, 6 հարյուրյակ,
Չերնոմորյան 3-րդ կազակ[ային] գունդ⁴⁸, 6 հարյուրյակ,
Վոլգյան 3-րդ կազակ[ային] գունդ⁴⁹, 4 հարյուրյակ,
Կուբանյան կազակ[ային] մարտկոց՝ 6 կազակ[ային] թնդանոթ,
Կուբանյան 5-րդ կազակ [ային] մարտկոց՝ 6 կազակ[ային] թնդանոթ:
Ընդամենը՝ 2 դրուժինա, 14 հարյուրյակ և 12 կազակ[ային] թնդանոթ:

Տեղակայված են Իգդիրի, Մարգարայի և Վաղարշապատի շրջանում, բացառությամբ Վոլգյան 3-րդ գնդի և Կուբանյան 1-ին մարտկոցի, որոնք գտնվում են Բայազետ-Դիադին շրջանում:

4) Վերջին հեռագրակայանները գտնվում են Կաղզվանում, Ալաշկերտում, Շեյխանում, Դերիկում, Սանջանում, Նոխուդլիում, Փըրե-Մասյանում, Բոստակայայում, Պատնոսում, Բայազետում և Իգդիրում:

Հետախուսակայանները՝ Կաղզվանում, Նովո-Նիկոլանկայում, Կողբում, Փարնաուտում, Իգդիրում, Էջմիածնում, Բայազետում, Դիադինում, Ղարաքիլիսայում, Չելկանիում, Դերիկում և Սանջանում:

45 Սավիցկի Իսադիտ Վիկտորի (1863-1941)՝ գեներալ-լեյտենանտ (1917), Թուրքեստանյան 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետ (08.1914-10.1915), 66-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար (26.10.1915), Թուրքեստանյան 2-րդ բանակային կորպուսի հրամանատար (04.1917), Սպիտակ շարժման մասնակից:

46 Կողբ:

47 Գունդը կազմավորվել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբում: Հրամանատարն էր գնդապետ Ա. Գ. Ալազանովը (08.1915-08.1916):

48 Չերնոմորյան կազակային գունդը (1889-1918) կազմավորվել է Կուբանի մարզի Կովկասյան բաժանմունքի կազակներից: Գործել է Կովկասյան 2-րդ կազակային դիվիզիայի կազմում: 1914 թ. հուլիսից տեղակայվել է Թիֆլիսի նահանգի Ջալալօղլի (այժմ՝ քաղաք Ստեփանավան) բնակավայրում: Կազմում ընդգրկվել է 6 հարյուրյակ:

49 1870 թ. անվանակոչվել է Թերեքյան կազակային զորքի Վոլգյան գունդ: 1882 թ. վերակազմավորվել է երեք ստորաբաժանման գնդերի, որոնցից 2-րդը և 3-րդը եղել են արտոնյալ և զորակոչվել են միայն պատերազմի ժամանակ:

Թռուցիկ փոստը՝ Չերնոմորյան 1-ին կազակ[ային] գնդի 2 գ հարյուրյակ՝ Կաղզվան - Նովո-Նիկոլանկա - Ղարաքիլիսա - Չելկանի - Դերիկ - Սանջան - Բուռնի -բուլաղ գծով իր նյութավորումներով:

ա) Թութաթ⁵⁰ - Նոխուղլի և բ) Չելկանի - Ռիդկան - Կյուրդ-անի, Վոլգյան 3-րդ կազակ. գնդի 2 հարյուրյակ՝ Իզդիր - Ղարաքիլիսա գծով:

5. Առաջին մարտակարգի շարժապահեստները տեղակայել ջոկատների հրամանատարների հայեցողությամբ, իսկ մնացած մարտակարգերի շարժապահեստները և սանիտարական հաստատությունները՝ հրետանու տեսուչի և կորպուսի բժշկի կարգադրությամբ:

6. Ճարտարագիտական պահեստը՝ Նովո-Նիկոլանկայում:

7. Պարենի և անասնակերի մատակարարումը և տրանսպորտային միջոցների բաշխումը ռազմական ճանապարհների վրա կատարել համաձայն կորպուսի N 98 հրամանի:

8. Կորպուսի համբարակի պետը պետք է ամեն օր զեկուցի կորպուսի շտաբ բերվող և մթերային պահեստներում պահվող պարենի ու անասնակերի քանակի մասին:

9. Կորպուսի շտաբը գտնվում է Սուֆլա⁵¹ Դերաբի գյուղում, ուր պետք է ուղարկել շտապ զեկույցները երեկոյան ժամը 8-ին:

10. Տեղակալներն են գեներալ-լեյտենանտ Աբացիևը և գեներալ-մայոր Նազարբեկովը:

11. Չոկատների պետերին հրամայում եմ ինձ ներկայացնել իրենց հրամանատարության տակ գտնվող ջոկատներին տրված հրամանները, նրանց տեղակայման սխեմաները և կապը:

Բնագիրը ստորագրել է կորպուսի հրամանատար, հեծելագործի գեներալ Օզանովսկին:

Դերիկի ջոկատի հրամանը լրացուցիչ կուղարկվի»:

Այսպիսով ստիպված էինք կրկին լքել արդեն հարազատ դարձած վայրը: Այս անգամ, համաձայն կորպուսի հրամանատարի խոստման, որ մենք կձմեռենք Չելկանիում և կարող ենք հիմնավորապես տեղավորվել, մենք տեղավորվեցինք ավելի լավ, քան երբևիցե եղել է, ուստի բոլորի համար ծանր էր հեռանալ արդեն հարազատ դարձած վայրից: Իսկ գորմասերը քիչ ջանք չէին գործադրել բառիս բուն իմաստով այդ հսկա շինությունները կառուցելու համար: Եղանակը դեռևս բարենպաստ էր մեզ համար, սակայն զգացվում էր, որ շուտով կսկսվի խիստ ձմեռ՝ փոթորիկներով և քամիներով:

Դեկտեմբերի սկզբներին ես շտաբի հետ Կոլչ-Գյադուկով գնացի Դերիկ, իսկ դիվիզիայի գործնասերը, համաձայն Դերիկի ջոկատի համար ստացված հրամանի, պետք է ուղղվեն հրամանում նշված վայրերը:

«Դերիկի ջոկատի N 1 հրամանը:

Դերիկ՝ 1 դյույմում 5 վերստանոց թուրքական քարտեզ:

1915 թ. դեկտեմբերի 8-ին:

50 Դութաթ:
51 Ներքին (կուրմանջի):

1. Մեր կորպուսի դիմաց տեղակայված են՝ Բայրակդարի շրջանում 29-րդ դիվիզիան, 5-րդ հավաքական դիվիզիան, աշիրեթական 3-րդ բրիգադը և Կոմա-Կարա-գյոզի շրջանում սուվարիի 2 գունդ ու Լիր-Ախլաթ շրջանում՝ 36-րդ հետևակային ու 2-րդ հեծելագորային դիվիզիաները:

Սարիդամիշի ուղղությամբ տեղակայված են IX և XI կորպուսները:

Օլթիի ուղղությամբ՝ 14 գումարտակ և տարբեր զորամասերի 10 թնդանոթ:

Վանի ուղղությամբ՝ 2 գումարտակ, 4 թնդանոթ և 3-4 հազար քրդեր:

Էրզրումում՝ 14-19 գումարտակ և 10-12 թնդանոթ՝ չհաշված ամրոցի հրետանին:

Մեր կորպուսի ճակատի առջև գտնվում են հակառակորդի ամրացված դիրքերը հետևյալ ուղղությամբ՝ Չակմակ-դադի լեռան արևելյան վերջավորություն – Սինա-նիմ-կումի (?) – Կուսյակ – Նազի – Կալենդուր – Շարոյի-գոմ – Թեղուտ – Խալիս-թափասի լեռ. հին ամրությունները Կոսի – Խալի լճի շրջան– Բլեջան լեռնաշղթան:

2. Մեզանից աջ՝ ներառյալ մինչև Միրկամիրի լեռնանցքը, տեղակայված է Կովկասյան 1-ին կորպուսը, Օլթիի ուղղությամբ՝ Թուրքեստանյան 2-րդ կորպուսը, մերձ-ծովյան ուղղությամբ՝ գեներալ Լյախովի ջոկատը: Մեզանից ձախ՝ Վանի ուղղությամբ մինչև Արճեշ ներառյալ՝ գեներալ Չեռնոգուրովի ջոկատը: Պարսկաստանում է գեներալ Բարաթովի ջոկատը:

Բանակային պահեստագորը տեղակայված է Կարսի և Կարակուրտի միջև:

3. Մեր կորպուսին հրամայված է հիմնովին ապահովել մեր կողմից գրավված շրջանը՝ Միրկամիրի լեռնանցքից մինչև Բուռնի-բուլաղ՝ ներառյալ արևելյանը, հակադարձել թուրքերի հնարավոր հարձակմանը 1-ին կորպուսի ձախ թևի և 1-ին ու 4-րդ կորպուսների միակցման հատվածը ճեղքելու փորձերին և կապ պահպանել գեներալ Չեռնոգուրովի՝ Արճեշի ջոկատի հետ:

4. Նշված կարգադրությունը կատարելու համար կորպուսի հրամանատարը հրամայել է՝ ա) իմ հրամանատարության տակ գտնվող Դերիկի ջոկատին, որը կազմում են Կովկասյան] 6-րդ հրաձգային] գունդը, Կովկասյան] 7-րդ հրաձգային] գունդը, Կովկասյան] 2-րդ հրաձգային] հրետանային դիվիզիոնի 2 գումարտակ, 66-րդ հրետ[անային] բրիգադի 2 մարտկոց, Չերնոմոդյան կազ[ակային] գնդի 3 հարյուրյակ և Կարսի 2-րդ բերդ[ային] վաշտերը. 1) հակառակորդի հարձակման դեպքում նրան հետ մղել, 2) Մոլլա-Օսման գյուղի շրջանում առաջապահ ուժեր տեղակայել երեք զորատեսակներից, իսկ առաջապահից՝ պահակային զորախումբ հետևյալ գծով՝ Միրկամիրի լեռնանցք, Կեկե գյուղ, Կանեսայի – Մերկե-հիլ գյուղերը ներառյալ, 3) հետախուզությունը կատարել հետևյալ ուղղությամբ՝ հյուսիսից սահմանափակվելով Միրկամիր-դաղ – Չակմակ-դաղ [լեռներով], իսկ հարավում՝ Միրկե-հիլ – Գամի գյուղերով, 4) ամուր կապ հաստատել Միրկամիրի լեռնանցքը գրաված 1-ին կորպուսի զորամասերի ու Սանջանի ջոկատի առաջապահ զորամասերի հետ:

բ) Գեներալ Պեվնևի հրամանատարության տակ գտնվող Սանջանի ջոկատին, որի կազմում են Կովկասյան] 8-րդ հրաձգային] գունդը, 66-րդ հրետանային բրիգադի 2-րդ, 3րդ և 4-րդ մարտկոցները, Լաբինսկյան 1-ին կազ[ակային] գունդը, Չեռնոմոդյան 1-ին կազ[ակային] գնդի կիսահարյուրյակը, Թուրքեստանյան 9-րդ և 10-րդ հանգրվանային վաշտերը, Հայկական 2-րդ դրուժինան, NN 3-րդ, 4-րդ և 9-րդ բեռնակիր հեռագրակայանները:

1) հակառակորդի հարձակման դեպքում մինչև օգնական ուժերի հասնելը հակահարված հասցնել և պաշտպանել ձախ թևը,

2) երեք զորատեսակներից առաջապահ ուժեր առաջ մղել՝ ա) աջում՝ Նոխուրդի – Կարա-աղաջում՝ Նազիում թողնելով 2 հարյուրյակ և Փրե-Մասյանում հարյուրյակ ու հետախույզների խումբը, բ) ձախում՝ Բուռնի-բուլաղի շրջանում՝ 3 հարյուրյակ, Բոստան-կայայում՝ 2 վաշտ 3 հարյուրյակ և Պատնոսում 2 վաշտ ու Հայկական 2-րդ դրուժինան, 3) պահակային զորախումբը տեղակայել Մերկե-հիլում, Մոլլա-Ալի լեռնաշղթայի վրա, Լալա-դաղի – Մանազկերտ – Մուլթանմուղ – Փիր – Օմար շրջանում, 4) հետախույզությունը կատարել՝ հյուսիսից սահմանափակվելով Մերկե-հիլ – Գամիի գծով և արևելքից՝ Չիրաքլի – Նորշեն գյուղերով՝ հատուկ ուշադրություն դարձնելով դեպի Կառմա-Կարա-գյոզի, Կոփ-Լիրի, Ախլաթի և Նորշենի վրա, 5) կապ պահպանել Արճեշի ջոկատի հետ:

գ. Պահեստագործին՝

ա) գնդապետ Դեմուհանի ղեկավարության տակ գտնվող խմբին՝ Կովկասյան] 5-րդ հրաձգային] գնդին, աշխարհագրային 593-րդ դրուժինային, Կովկասյան] 2-րդ հրաձգային] հրետանային դիվիզիոնը և Կովկասյան] 2-րդ առանձին սակրավորական վաշտը տեղակայել Դերաբի – Մուֆլա Դերաբի – Ղարաքիլիսա – Չելկանի – Ալաշկերտ շրջանում, բ) գեներալ-մայոր Սավիցկու հրամանատարության տակ գտնվող խմբին՝ 66-րդ հետևակային դիվիզիային՝ տեղակայվել Կաղզվան – Կուլի շրջանում, գ) գեներալ-լեյտենանտ Աբացիևի հրամանատարության տակ գտնվող խմբին՝ 594-րդ և 595-րդ աշխարհագրային դրուժինաներին, Կիզլյար-Գրեբենսկյան 3-րդ կազակային] գնդին, Չեռնոմորյան 3-րդ կազակային] գնդին, Վոլգյան 3-րդ կազակային] գնդին, Կուբանյան 1-ին և 5-րդ կազակային] մարտկոցին՝ տեղակայվել Իզդիր – Մարգարա – Վաղարշապատ շրջանում, բացառությամբ Վոլգյան 3-րդ կազակային] գնդի և Կուբանյան 1-ին կազակային] մարտկոցի, որոնք տեղակայվելու են Բայագետ – Դիաղին շրջանում:

6. Վերը նշված առաջադրանքները կատարելու համար իմ հրամանատարության տակ գտնվող Դերիկի ջոկատին հրամայում եմ.

ա) Աջ ջոկատ՝ [հրամանատար] գնդապետ Սիլիկով [որի հրամանատարության տակ գտնվում են] Կովկասյան] 6-րդ կազակային] հրաձգային] գնդի 4 գում[արտակ], 8 գնդ[ացիր], Կովկասյան] 2-րդ հրաձգային] հրետ[անային] դիվիզիոնի 4 լեռ[նային] թնդ[անոթ] և 1 հարյուրյակ:

Ընդամենը՝ 4 գում[արտակ], 8 գնդ[ացիր], 4 լեռն[ային] թնդ[անոթ] և 1 հարյուրյակ:

1) Ջոկատի շտաբը և երկու գումարտակ տեղակայել Խանազիր գյուղում, իսկ մնացած զորամասերից առաջապահ ուղղել Շեյխան:

2) Հակառակորդի հարձակման դեպքում նրան հակահարված տալ Միրկամիր-դաղ լեռից մինչև Զյուրդ-Յական պատրաստված դիրքերից:

3) Կայուն կապ հաստատել 1-ին կորպուսի զորախմբերի հետ՝ տեղակայված Միրկամիրի լեռնանցքում:

4) Ձախ ջոկատ՝ [հրամանատար] գնդապետ Օրբագցով, որի հրամանատարության տակ գտնվում են Կովկասյան] 7-րդ հրաձգային] գնդի 3 Է գում[արտակ], 8 գնդ[ացիր], 66-րդ հրետ[անային] բրիգ[ադի] 6 թնդ[անոթ], Կովկասյան] 2-րդ

հրաձգ[ային] դիվ[իզիոնի] 2 լեռ[նային] թնդ[անոթ], Չերնոմորյան կազ[ակային] 1-ին գնդի 1 գ հար[յուրյակ]:

Ընդամենը՝ 3 գում[արտակ], 8 գնդ[ացիր] և 1 գ հարյուրյակ:

1) Շտաբը տեղակայել Սեյդ գյուղում, իսկ զորքերին՝ Սեյդո – Դալի–Խտալ – Չալո շրջանում և երեք զորատեսակներից առաջապահ ուղղել Մամատու:

2) Հակառակորդի հարձակման դեպքում հակահարված հասցնել Զյուրդ-Յակա-նից մինչև Բեշե գյուղը:

3) Կայուն կապ հաստատել գեներալ Պեվնևի ջոկատի հետ:

գ) Պահեստագործ գտնվում է իմ անմիջական ենթակայության տակ.

Կովկ[ասյան] 7-րդ հրաձգ[ային] գնդի 2 գում[արտակ],

Չեռնոմորյան 1-ին կազ[ակային] գնդի գ հար[յուրյակ],

Կովկ[ասյան] 2-րդ սակրա[վորական] գումարտակի 2 գում[արտակ]:

Ընդամենը՝ 2 գում[արտակ], գ հար[յուրյակ] և 2 գում[արտակ]:

1) Մեկուկես հարյուրյակին տեղակայվել Սեյդոյում, իսկ մնացածին՝ Դերիկ գյու-ղում:

6) Իմ ենթակայության տակ գտնվող շտաբին [տեղակայվել] Դերիկ գյուղում,

7) 66-րդ հրետ[անային] բրիգադի 1-ին շարժապահեստին տեղակայվել Դերիկ գյուղում:

2-րդ լեռնայինին՝ իր մարտկոցին կից:

8) Պահակային զորախումբը տեղակայել [ի ետևյալ կերպ]՝ աջ ջոկատը՝ առաջապա-հից մինչև Միրկամիր-դաղ լեռնաշղթան, Դիլադիր և Կեկե գյուղերից արևելք՝ մինչև բարձունք, որտեղ՝ Ռաշվա գյուղից 3 վերստ դեպի արևմուտք, ճանապարհների խաչմե-րուկն է: Չախ [ջոկատը]՝ բարձունքից և ճանապարհների խաչմերուկից, որը Ռաշվա գյուղից 3 վերստ դեպի արևմուտք է, Չաթ լեռնաշղթայով, Մոլլա-Բաքիրից արևելք՝ մինչև Մերկե-հիլ:

9) Աջ ջոկատին՝ հետախուզություն կատարել Միրկամիր-դաղ և Չակմակ-դաղ – Ֆերնակ – Ռաշվա շրջանում:

Չախ ջոկատին՝ [հետախուզել] Չերնակի, Ռաշվայի, Մերկե-հիլի և Գոմայի շրջանը:

Հետախուզությունը կատարել պարեկախմբերով և հետախուզներից ու կամա-վորներից կազմված խմբերով՝ աշխատելով մանրամասն հետախուզել հակառակորդի դիրքերը և դարաններ կազմակերպել, թույլ չտալ նրան [թշնամուն] հետախուզություն կատարել:

Շատ կարևոր է գերիներ վերցնել:

Առնվազն շաբաթը մեկ հետախուզություն կատարել լայն ճակատով նպատակ ու-նենալով համոզվելու՝ չե՞ն կատարվել արդյոք փոփոխություններ հակառակորդի դիր-քերում, բացի այդ՝ ցերեկը հետևել հակառակորդին դիտակետերից:

10) Կապը՝ ա) Կորպուսի շտաբի հետ վերջին հեռախոսակայանները գտնվում են Շեյխան և Դերիկ գյուղերում, իսկ ջոկատի շտաբից հեռախոսագծեր են հաստատվել Սեյիդ – Դիկլիմա–Շեյխան և Դերիկ – Դիկլիմա ուղղություններով: Աջ և ձախ ջոկատ-ներին՝ հեռախոսային կապ հաստատել ջոկատների շտաբների և առաջապահների հետ, առաջապահների ու գլխավոր ուղեկալների միջև և, եթե հնարավոր է, ապա բոլոր ուղեկալների միջև:

բ) Հեռագրակայանները գտնվում են Կաղզվանում, Նովո-Նիկոլյանկայում, Կուլպում, Տարանգուտում, Իգդիրում, Էջմիածնում, Դիաղինում, Ղարաքիլիսայում, Դերիկում և Սանջանում:

Կորպուսի շտաբի կողմից թռուցիկ փոստը տեղակայված է հետևյալ ուղղությամբ՝ Կաղզվան, Նովո-Նիկոլյանկա, Ղարաքիլիսա, Չելկանի, Դերիկ, Սանջան, Բուռնի-բուլաղ, հետևյալ ճյուղավորումներով՝ Դութաղ, Նոխուղի, Չելկանի, Ռդդկան, Զյուրդ-Անո:

Մեյդի և Դերիկի միջև ծրարների փոխանցման համար ձախ ջոկատի պետին՝ թռուցիկ փոստի պահակակետ տեղակայել Ալիսո բնակավայրում գտնվող անանուն գյուղում:

Աջ ջոկատին՝ ծրարներն ուղարկել Չելկանիում գտնվող պահակակետի միջոցով:

գ) Աջ և ձախ ջոկատներին դիտարկման կետերում տեղակայել հելիոգրաֆային⁵² կայաններ և դրանց միջոցով պահպանել կապը երկու ջոկատների միջև:

դ) Ընդհանրապես ուշադրություն դարձնել ինչպես շտաբների, այնպես էլ հարևան ջոկատների առաջապահ գորամասերի միջև կայուն, անընդհատ կապ հաստատելուն՝ հեռախոսի, օպտիկական ազդանշանների միջոցով, հեծելապարեկներ և պարեկներ ուղարկելով ու կարգադրությունները փոխանակելով և այլն:

Ամենօրյա շտապ զեկույցներում նշել, թե օրվա ընթացքում պահպանվե՞լ է արդյոք փաստացի կապը հարևանների հետ, եթե ոչ, ապա ինչ միջոցներ են ձեռք առնված այն վերականգնելու համար:

ե) Առավել կարևոր, դժվարմատչելի և ձյան կուտակումների վայրեր պարեկներ ուղարկելու համար կազմել դահուկորդների խմբեր՝ նրանց տալով ձեռքի տակ եղած նյութերից պատրաստված պարզունակ դահուկներ, և կատարման մասին զեկույցել ինձ:

Շտապ զեկույցներն ուղարկել այն հաշվարկով, որ դրանք ջոկատի շտաբ հասնեն անպայման երեկոյան ժամը 6-ին: Շտապ զեկույցներում նշել, թե օրվա ընթացքում հակառակորդի կողմում ինչ է նկատվել և մեր կողմից հետախուզության համար ինչ է արվել, թեկուզ այդ հետախուզությունը որևէ արդյունք չի ունեցել:

12. Երկու ջոկատների հրամանատարական կազմին՝ անպայման ծանոթանալ ջոկատների տեղակայման վայրերին, ճանապարհներին և ամրացված դիրքերին :

13. Գոյություն ունեցող դիրքերի ամրությունները ստուգել և, եթե անհրաժեշտ է կատարելագործել նոր խրամատներով և արհեստական արգելքներով: Ուշադրություն դարձնել դրանց քողարկմանը և տեղանքին համապատասխանությանը, հիմնավորապես կահավորել դիտակետերը, որպեսզի դրանք դիմանան հրետանակոծությանը, խրամատները մաքրել ձյունից՝ դրանք հակառակորդի կողմից ծածկելով ձյունով: Խրամատներում ունենալ մինչև տեսադաշտում գտնվող կարևոր կետերը նախօրոք կատարված չափումների աղյուսակներ: Չորամասերի դիրքերի և ջոկատի գորամասերի տեղակայման վայրերի միջև ընկած ճանապարհները կարգավորել այնպես, որ դրանցով կարողանան անցնել թեթև հրետանին ու սայլերը: Խաչմերուկներում տեղակայել ցուցանակներ:

52 Հելիոգրաֆն օպտիկական սարքավորում է, որը տարածության վրա լուսային ազդանշանների միջոցով հաղորդում է տեղեկություններ: Սարքը լայնորեն կիրառվել է մի շարք երկրների բանակներում:

14. Պատշաճ ուշադրություն դարձնել սանիտարական դրության վրա, ցույց տալ արտաքնոցների, աղբի և անասունների սպանդի վայրերը:

15. Վիրավորներին և հիվանդներին տանել Մոլլա-Օսմանում գտնվող լազարեթը:

16. Իմ տեղակալներն են գնդապետ Տրեդենսկին, գնդապետ Օբրագովը և գնդապետ Սիլիկովը:

Ջոկատի հրամանատար, գեներալ-մայոր Նազարբեկով:

Շտաբի պետ, գլխավոր շտաբի գնդապետ Պոլտավցև»:

Մանջանի ջոկատին (4 գ գում[արտակ], 12 թեթև թնդ[անոթ], 6 գ հարյուրյակ, Հայկական 1-ին [2-րդ] դրուժինա և 3 [հեռագրա]կայան) հրամայված էր հակառակորդի հարձակման դեպքում մինչև օգնական ուժերի հասնելը հակահարված տալ նրան Բիշե գյուղից մինչև Աշաղի – Կարա-Խալիդ գյուղ՝ ապահովելով իր ձախ թևը: Գրա համար.

Առաջապահ՝ ա) Աջը՝ փոխգնդապետ Եգուպով⁵³ [որի հրամանատարության տակ էին՝

Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի 1 գում[արտակ],

Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի 2 գնդ[ացիր],

Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի հետախույզների 1 խումբ,

66-րդ հրետ[անային] բրիգադի 2 լեռն[ային] թնդ[անոթ],

Լաբինսկյան 1-ին կազ[ակային] գնդի 3 հար[յուրյակ]:

Ընդամենը՝ 1 գում[արտակ], 2 գնդ[ացիր], հետախույզների խումբ, 2 լեռն[ային] թնդ[անոթ], 3 հար[յուրյակ]:

Գրավել Կոնիսիայի – Կարա – Ագաջ շրջանը՝ մեկ հարյուրյակ ուղղելով դեպի Նազի-Խորա, մեկ հարյուրյակ ու հետախույզների խումբը՝ Փրե-Մաայան:

Պահակային զորախումբը տեղակայել հետևյալ գծով՝ Կարա–Մոլլա–Ալի – Լալադաղի լեռնաշղթա – Մանագլերտ ներառյալ:

Հետախույզությունը կատարել հետևյալ գոտիով, որը հյուսիսից սահմանափակված է Միրկե–Հիլ–Գամի շրջանով, իսկ հարավից՝ Եփրատով:

Հատուկ ուշադրություն դարձնել Կոմա–Կարա–գյոզ գյուղի ուղղությամբ, գեներալ Նազարբեկովի զորամասերի հետ կապը պահպանել Միրկե–հիլով:

բ) Ձախ առաջապահը՝ գնդապետ Նոսկով [որի հրամանատարության տակ էին՝

Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի Է գում[արտակ],

Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի 2 գնդ[ացիր],

Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի 2 վաշտ,

66-րդ հրետ[անային] բրիգադի 2 լեռն[ային] թնդ[անոթ],

Լաբինսկյան 1-ին կազ[ակային] գնդի 3 հար[յուրյակ],

Հայկական 2-րդ դրուժինա՝ 1 դրու[ժինա]:

Ընդամենը՝ Է գում[արտակ], 2 գնդ[ացիր], 2 լեռն[ային] թնդ[անոթ], 3 հար[յուրյակ], 1 դրու[ժինա]:

Գրավել Բուռնի–բուլաղ շրջանը, Բոստան–կայա ուղղել 3 հարյուրյակ, 2 վաշտեր և Հայկ[ական] 2-րդ դրուժինան՝ դեպի Պատնոս: Պահակային զորախումբը տեղակա-

53 Եգուպով Յակով Կոնստանտինի (1871-անհտ.) գնդապետ (05.08.1916), Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի հրամանատար: Դիմանի ձակատամարտում ցույց տված արիության համար պարգևատրվել է Ս. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Սպիտակ շարժման մասնակից:

յել հետևյալ գծով՝ Մանագկերտ – Սուլթան–մուղ – Փիր–Օմար ներառյալ: Հետախուզությունը կատարել հետևյալ գոտիով, որը հյուսիսից սահմանակիցված է Եփրատ գետով և արևելքից՝ Չերակլին – Նորշեն գյուղերով, հատուկ ուշադրություն դարձնելով Կոփ – Լիրի, Ախլաթի և Նորշենի վրա: Արճեշի ջոկատի հետ կապ պահպանել Արի–գեղիգի լեռնանցքով:

Գլխավոր ուժերը՝ գնդապետ Չալլինսկի ⁵⁴ [որի հրամանատարության տակ էին՝	
Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի	2 գ գում[արտակ],
Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի	4 գնդ[ացիր],
Կովկասյան] 2-րդ կազակ[ային] դիվիզիայի	8 գնդ[ացիր],
66-րդ հրետ[անային] բրիգադի	12 թեթև և 2 լեռն[ային] թնդ[անոթ],
Չերնոմորյան 1-ին կազակային] գնդի	գ հար[յուրյակ]:
Ընդամենը՝	2 գ գում[արտակ], 12 գնդ[ացիր], 12 թեթև և 2 լեռն[ային] թնդ[անոթ]

և գ հար[յուրյակ]:

Կարգադրություն հակառակորդի հարձակման դեպքում:

Հակառակորդի մեծ ուժերի հարձակման դեպքում երկու առաջապահներին [կարգադրում են] համառորեն դիմակայել դիրքերում. աջը՝ Նոխուղի – Կարա–Աղաջի, իսկ ձախը՝ Բուռնի–Բուլաղի մոտ:

Նահանջել միայն իմ կարգադրության դեպքում. աջը՝ Սամադով դեպի Սանջանի դիրքերի աջ թևը, ձախը՝ գնդապետ Նոսկովի հրամանատարությամբ, 4 վաշտերով, 2 լեռն[ային] թնդանոթներով, 2 գնդացիրներով և 1 հարյուրյակով, շարժվել դեպի Տախվա–Կարի–գյոլ թափա, որտեղ և գրավել սանդղաշարք դիրքեր՝ ապահովելով մեր ձախ թևը: Դիրքերում հաստատվելուց հետո հեռախոսային կապ հաստատել Լաբինսկյան 1-ին կազակային] գնդի հետ: Չախ առաջապահի մնացած զորամասերը (5 վաշտ և 2 հարյուրյակ) ավագ [սպայի] գլխավորությամբ պետք է հապաղելով նահանջեն դեպի Միլան՝ առաջադրանք ունենալով հետախուզելու հակառակորդի ուժերը և նրանց տեղաշարժի ուղղությունը: Գլխավոր ուժերը Սանջանի դիրքերը պետք է գրավեն միայն հատուկ կարգադրության դեպքում: Դիրքերում տեղակայումը կատարվելու է Կովկասյան] 8-րդ հրաձգ[ային] գնդի հրամանատարի հայեցողությամբ:

Աջ առաջապահի հեծելագործին է առաջադրվում Սանջանի դիրքերի գրավումից հետո Սանջանի դիրքերի աջ թևի պահպանությունը Սամադ–Բեշե տեղամասում՝ հսկելով՝ ա) Կավման–Խորա և բ) Չալա–Բաշի – Մուվյան ճանապարհները:

Պահպանությունը և հետախուզությունը

Պահպանությունը և մերձակա հետախուզության մանրամասն կազմակերպումը կատարվում են գլխավոր ուժերի և առաջապահների պետերի կարգադրությամբ, իսկ հեռավոր հետախուզությունն իրականացվելու է պարբերաբար՝ ջոկատի շտաբի հրամանով:

Իմ՝ դիվիզիայի շտաբի հետ Դերիկ գյուղ գալուց հետո ես և դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Պոլսովցևը 66-րդ հետևակային դիվիզիայի պետ, գեներալ-մայոր

54 Չալլինսկի Ջենոն Աֆանասի (1858-անհտ.)՝ գեներալ-մայոր (25.08.1916), Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի հրամանատար (09.03.1914-23.06.1916):

Սավիցկուց և Գլխավոր շտաբի կապիտան Կոչարժևսկուց ընդունեցինք հերթափոխը, և նրանք հաջորդ օրը մեկնեցին թիկունք՝ իրենց դիվիզիա:

Դերիկ գյուղը շատ փոքր էր: Չնայած դրան՝ գյուղում մի քանի տներ կային պատուհաններով: Բնակիչներ չկային: Մի մեծ շինություն՝ մի քանի սենյակներով, զբաղեցրել էին շտաբի պետը և նրա ենթակաները: Այնտեղ էր տեղավորվել նաև դիվիզիայի համբարակային ծառայությունը, իսկ ես տեղավորվեցի այնտեղ, որտեղ բնակվում էր գեներալ Սավիցկին՝ ախռի վերևում գտնվող մեծ սենյակում: Այդտեղի կցակառույցներում տեղավորվեցին դիվիզիայի բժիշկը և շտաբի մի քանի աշխատակիցներ (հավանաբար այդ սենյակներում բնակվել են ինչ-որ քուրդ բեկի կանայք): Այդտեղ էլ շտաբի համար սարքավորվեց ճաշարան, որը լուսավորվում էր առաստաղից: Կորպուսի հրամանատարն ինձ առաջարկեց ինձ համար տուն կառուցել, սակայն այդ առաջարկությունն ինձ համար անընդունելի էր, քանի որ մի քանի ամսվա համար կվատնվեր զգալի գումար, ինչն ավելորդ էր և անօգուտ: Մինչև իմ ժամանելը անտառանյութն արդեն բերվել էր: Քանի որ իմ սենյակի հատակը և առաստաղը կավապատ ցախից էին, ես խնդրեցի եղած տախտակներից ինձ համար պատրաստել հատակը, իսկ առաստաղը՝ նրբատաշ տախտակից, ինչն էլ արվեց մեկ օրում:

Դեկտեմբերի 29-ին բանակում ստացվեց հրաման 4-րդ կորպուսի հրամանատար, գեներալ Օգանովսկուն արձակուրդ ուղարկելու և նրա փոխարեն այդ պաշտոնում 39-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դե-Վիտտին⁵⁵ նշանակելու մասին: Բոլորիս համար հասկանալի էր, որ գեներալ Օգանովսկին ընդմիջտ հեռանում է մեր կորպուսից, ինչը, ցավոք, հետագայում հաստատվեց: Այդ արձակուրդը նրան կոփյան մարտերի համար հեռացնելու առիթ էր: Կորպուսի բոլոր պաշտոնյաները [սպաները] խիստ ցավում էին գեներալ Օգանովսկու հեռանալու համար: Նա իր համեստությամբ, հասանելիությամբ, սիրալիրությամբ և բարությամբ վայելում էր բոլորի համակրանքը: Գեներալներից գրեթե միակն էր, որ լավ էր վերաբերվում հայերին և գնահատում էր հայկական դրուժինաների աշխատանքը:

Դեկտեմբերի սկզբներին ուժեղ ձյուն տեղաց: Սկսվեց դաժան ձմեռն իր սարսափելի բուք ու բորանով, ձյունամրրիկներով ու քամիներով, որոնք այդ տեղանքում վերջ են դնում ցանկացած կյանքի: Ոչ միայն առանձին գորամասերի, այլև միայնակ մարդկանց, ինչպես նաև անվային ու բեռնակիր տրանսպորտի տեղաշարժը դժվարացավ զոյություն ունեցող ճանապարհներով և անհնար էր անհատների ու ոչ մեծ խմբերի համար: Ահռելի ջանքեր էին հարկավոր ուղեկալների կապը պահակակետերի հետ ապահովելու համար: Դժվարացել էր նաև պարենի ու անասնակերի մատակարարումը առաջապահ դիրքեր: Հատուկ Չուխ-Գյաղուկի լեռնանցքը մաքրելու համար Խսանիկ գյուղում տեղակայվել էր դրուժինա: Մեծ ջանքեր էին հարկավոր այդ լեռնանցքը մաքրելու համար: Երբեմն մեկ օրվա ընթացքում, երբ մոլեգնում էին բուքը և ձյունամրրիկները, մի քանի անգամ ստիպված էին լինում մաքրել ճանապարհը, քանի որ այն տեղնուտեղը ծածկվում էր ձյունով: Ձիերը դժվարությամբ էին հաղթահարում այդ լեռնանցքը: Ամենից շատ տառապում էին դժբախտ ուխտերը: Նրանց ոտքերը սահում էին, ինչի հետևանքով ոտքերի աճուկները պատռվում էին, և այդպիսի ուխ-

55 Դե-Վիտտ Վադիմիր Վադիմիրի (1859 - անհտ.)՝ հեծելազորի գեներալ (1917), 39-րդ հետևակային դիվիզիայի պետ (17.02.1913-19.12.1915), Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի (19.12.1915-10.1917) հրամանատար, Կովկասյան բանակի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար (06.1917-10.1917):

տերն այլևս պիտանի չէին աշխատանքի համար ու լքվում էին ուղեվարների կողմից: Այդ դժբախտները տանջվելով մահանում էին կանգնած վիճակում: Ցավալի էր նայել նման վիճակում գտնվող ուղտերին:

Հայկական 1-ին և 2-րդ դրուժինաները Երևանում և Իզդիբում հանգստանալուց ու համարվելուց հետո կրկին ուղարկվեցին մարտական դիրքեր: 1-ինը մտավ Վանի ջոկատի կազմի մեջ և ուղարկվեց Արճեշ, իսկ երկրորդը՝ Սանջանի ջոկատի, 3-րդը կարծես ուղարկվեց Վան, իսկ 4-րդը մնաց պարսկական ճակատում:

Դեկտեմբերի 14-ի դրությամբ՝ Դերիկի և Սանջանի ջոկատները տեղակայված էին հետևյալ կերպ.

Դերիկի ջոկատ. աջը՝ ջոկատի շտաբը, Խանազիրում էր՝ Կովկասյան] 6-րդ հրաձգ[ային] գնդի 2 գում[արտակ] և 2 լեռն[ային] թնդ[անոթ]: Առաջնագծում են՝ Կովկասյան] 6-րդ հրաձգ[ային] գնդի 2 դր[ուժինա], 2 լեռն[ային] թնդ[անոթ] և 4 հար[յուրյակ] կազակներ: Դրանցից 1 գում[արտակ] 2 լեռն[ային] թնդ[անոթներով] ու 4 հար[յուրյակով], Շեյխանում էր, իսկ 1 գում[արտակ]՝ առաջնագծում:

Ձախը գնդապետ Օբրագովի ջոկատն է. Մամուտայում՝ 1 գում[արտակ], 4 հար[յուրյակ], 2 գնդ[ացիր], 2 լեռն[ային] թնդ[անոթ], Աբդուրահմանում՝ 3 վաշտ, Չալոյում՝ 1 գում[արտակ], 6 թեթև թնդ[անոթ], 1 հրետ[անային] շարժապահեստ և Կարսի ամրոցի սակրավորական վաշտի 1 դասակ, Ուղյան-Բաբայում՝ 2 վաշտ և հետախույզների 1 խումբ, Մեյդոյում էր շտաբը՝ 2 վաշտ, 6 գնդ[ացիր], ոչ շարային վաշտ, կազակների 4 հար[յուրյակ] և լեռնային շարժապահեստի 1 վաշտ:

Սանջանի ջոկատ. Պատնոսում Դրոյի հայկական դրուժինան, հար[յուրյակ], Թուրք[եստանյան] 10-րդ ռազմահանգրվանային վաշտն էին: Բոստան-կայայում՝ հար[յուրյակ] և 2 հեծ[յալ] թնդ[անոթ]: Փիր-Մայանում՝ 1 հար[յուրյակ] և հետախույզների խումբ: Բուրնի-բուլախում՝ հրաձ[իգների] 1 վաշտ և Թուրք[եստանյան] 9-րդ ռազմահանգրվանային վաշտը, Նոխուդլիում՝ հրաձ[իգների] 2 վաշտ, Կարա-Աղաջում՝ հրաձ[գային] 2 վաշտ, Խորում՝ 1 հար[յուրյակ], Նագիում՝ հար[յուրյակ], Սանջանում և Սամադում՝ 2 Չ գում[արտակ], 1 4 հար[յուրյակ], 12 թեթև ու 12 հեծյալ թնդ[անոթ] և 12 գնդ[ացիր]:

Վերը նշված զորամասերը, բացառությամբ առաջապահ Դերիկի ջոկատի, տեղավորվեցին քիչ թե շատ տանելի կերպով՝ գետնափոր տներում և գյուղերի բնակիչների կողմից լքված շինություններում: Աջակողմյան՝ Դերիկի ջոկատի առաջնագծում չկային գյուղեր, բացի այդ՝ գրոզենցիները, որոնց փոխարինել էր Կովկասյան] 6-րդ հրաձգ[ային] գում[արտակ], չէին հոգացել անհրաժեշտ թվով գետնափոր տնակներ կառուցելու մասին, իսկ դրանց մի մասը առատ ձյան պատճառով արդեն հասցրել էր փլուզվել, ուստի առաջնագծում գտնվող զորամասերը հարկադրված էին խիստ զրկանքներ կրել շինութունների բացակայության պատճառով: Ուղեկալներն օգտագործում էին երթային վրաններ, որոնք այնքան էին ծածկվում ձյունով, որ օգնության ուղարկվածները դժվարությամբ էին գտնում վրանների հետքերը: Նման ծանր իրավիճակում մեկ անգամ չէ, որ եղան մահվան դեպքեր:

Փոմա Իվանի Նագարբեկով [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 5, թ. 1-48: Բնագիր: Ձեռագիր:

ՏԵՏՐ 6

30 դեկտեմբերի 1929 թ.

Թիֆլիս

[1915 թ.] դեկտեմբերի 14-ին ես և իմ շտաբի պետը կառքով մեկնեցինք դեպի Դերիկի ջոկատի առաջապահը: Ծանապարհը բավականին տանելի էր, տեղ-տեղ գնում էինք խոր ձնից մաքրված միջանցքով: Մենք Սեյդ գյուղում գտնվող առաջապահի շտաբ ժամանեցինք բավականին վաղ: Կանգ առանք առաջապահի պետ, գնդապետ Օբրագցովի մոտ, որն սպրում էր բավականին հարմար շինությունում, որը հարմարեցված էր բնակության համար: Հաջորդ օրը մենք ձիերով գնացինք դիտելու առաջապահ զորամասերը և պահակային ծառայությունը: Պահակային ծառայությանը մենք չկարողացանք մոտենալ ձիերով, քանի որ ճանապարհները և շրջակա տարածքն ամբողջությամբ ծածկված էին նախորդ ձյունամրրիկների ձյունով, ուստի մենք դժվարությամբ էինք առաջանում:

Ինձ մոտ ոչ ուրախ տպավորություն էր ստեղծվում, երբ մտածում էի այն ահռելի աշխատանքների ու զրկանքների մասին, որոնք կատարում էին մարդիկ [զինծառայողները], որպեսզի կենցաղը դարձնեն քիչ թե շատ տանելի: Ահռելի աշխատանքներ էին տարվում, որպեսզի մաքրվեն հաղորդակցության ուղիները՝ ուղեկալների, պահակակետերի և հատկապես աջ առաջապահի հետ կապ պահպանելու համար, որը ոչնչացնում էր բնությունը մի քանի ժամվա ընթացքում:

Հաջորդ օրը ես մեկնեցի Դերիկ:

Թե որքան դժվար էր ջոկատների և հետախուզության միջև կապը, երևում է հետևյալ օրինակից. «Դեկտեմբերի 11-ին հետախույզների դասակը հասավ մինչև Մախհմուդ-կումի գյուղը՝ Չակմակ-դաղի ստորոտին: Գյուղում գտան պաքսիմատներ, աղ, ձավար և վառելիքի պաշար: Ծանապարհը դժվար է հետիոտնի համար, ձիերը չեն կարող անցնել: Հակառակորդը չի հայտնաբերվել: Ուժեղ մրրիկը և մառախուղը հնարավորություն չտվեցին շարունակելու հետախուզությունը»:

15-ը դեկտեմբերի: Աջ առաջապահի պահակային ծառայության պետի գեկուցումը. «Ուժեղ մրրիկ է, ձյուն և ցուրտ: Ծածկ ունեցող շինությունների իսպառ բացակայություն, ինչի հետևանքով մարդիկ չեն կարողանում տաքանալ, որը պահակային ծառայությունը դարձնում է վեր մարդկային ուժերից»:

17-ը դեկտեմբերի. «Դեկտեմբերի 14-ին դեպի ձախ թևը՝ Կեկե, Խարաբախան, Կինո, Մահմուդ-կումի ուղարկված հեծյալ հետախույզներն այսօր վերադարձան՝ չհասնելով Չակմակ-դաղ, որը նրանց առաջադրանքի վերջնակետն էր, խոր ձյան և ձյունամրրիկի պատճառով: Հակառակորդը ոչ մի տեղ չի հայտնաբերվել»:

Մի քանի օր համեմատաբար լավ եղանակ էր, ուստի ես որոշեցի օգտվել առիթից և ստուգել իմ [զորամասի] ձախ առաջապահը: Ծանապարհը ոլորապտույտ ու երկար էր: Նախօրյակին ես կարգադրել էի Չելկանի և Խանազիր գյուղերն ուղարկել կառքի համար փոխարինող ձիեր:

Դեկտեմբերի 18-ի առավոտից մանր ձյուն էր տեղում: Ինձ խորհուրդ տվեցին հետաձգելու ճանապարհորդությունը, սակայն ես որոշեցի մեկնել, քանի որ բոլոր կարգադրությունները նախօրեին արվել էին, բացի այդ՝ ես վստահում էի իմ կազակներին, որոնք պնդում էին, որ ճանապարհը լավ գիտեն և կգնան առջևից՝ ցույց տալով ճանա-

պարհը: Ես մեկնեցի իմ համհարզի՝ Գլխավոր շտաբի կապիտան Վեքիլովի հետ: Սկզբում ճանապարհը համեմատաբար տանելի էր, սակայն երբ սկսվեց ուժեղ ձյունամրրիկ, մենք սկսեցինք հաճախակի կորցնել ճանապարհը և դժվարությամբ էինք առաջանում: Նույնիսկ պահ եղավ, երբ մեր կառքը ձիերի և մեզ ու հեծյալ կազակների հետ ընկավ ձորակը: Մենք բոլորս ապշել էինք, որ ողջ ենք մնացել: Պարզվեց, որ մենք շեղվել էինք ճանապարհից և ընկել ձորակը: Կազակներն արագ դուրս եկան, սակայն քանի որ նրանք ընդամենը չորս հոգի էին, ուստի չէին կարող բարձրացնել կառքը և ազատել ձիերին, իսկ մենք ձիապանի հետ մեծ դժվարությամբ դուրս եկանք ձյան անոռելի գանգվածից: Մեզ, իհարկե, փրկեց առատ ձյունը: Կազակներից երկուսը գնացին Խանիկ գյուղ, որտեղ տեղակայված էր բանվորական դրուժինան՝ նախատեսված հատուկ Կիչ-Գյաղուկի լեռնանցքը մաքրելու համար: Բարեբախտաբար, աղետը տեղի էր ունեցել այդ գյուղի մոտակայքում: Ծուռով նրանք բերեցին բանվորներին, և նրանց օգնությամբ հնարավոր եղավ ազատել ձիերին և կառքը ձորից դուրս բերել ճանապարհ: Դրանից հետո մենք շարունակեցինք ճանապարհը դեպի Չելկանի գյուղը, որտեղ փոխեցինք ձիերը և ուղևորվեցինք Խանազիր, որտեղ գիշերեցինք աջ առաջապահի պետ, գնդապետ Միլիկովի մոտ, իսկ հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, մեկնեցինք Ծելխան գյուղ: Ծանապարհն այդտեղ էլ տանելի էր: Ձյունն այնքան էլ շատ չէր: Ծանապարհն անցնում էր լայն ձորի կողքով հոսող գետակի երկայնքով:

Գալով Ծելխան՝ մենք աջ առաջապահի գորամասերի պետ, փոխգնդապետ Պլատոնովի հետ ձի հեծած գնացինք դիրքերը: Եղանակը բարենպաստ էր: Արևային լավ եղանակ էր: Մինչև լեռնանցք բարեհաջող հասանք, քանի որ գետի երկայնքով ձգվող ճանապարհը մաքրված էր: Սակայն երբ սկսեցինք բարձրանալ, ճանապարհն ավելի ու ավելի էր վատանում: Հասանք լեռնանցքում տեղակայված պահակային պահեստագործին: Մարդիկ տեղավորվել էին մի ինչ-որ որջում՝ առանց պատուհանների ու դռների, որը Գրոգնենսկյան գնդի «ժառանգությունն» էր: Այդ շինությունը մի փոքր անցք ուներ, որը ծածկված էր զինվորական վրանապատաստով, ուր կարելի էր սողուկելով մտնել: Մենք մեծ ջանքեր գործադրեցինք այնտեղ մտնելու համար: Իհարկե, այդ շինությունը չէր կարելի անվանել գետնափոր տնակ: Ես ցանկացա գնալ ուղեկալների մոտ և պահակակետեր: Փոխգնդապետ Պլատոնովն ինձ գոռաչարեց, որ ներկայումս դա անհնար է, քանի դեռ ճանապարհները և արահետները չեն մաքրվել, քանի որ ձյունամրրիկների և ձյունահողմերի հետևանքով ամբողջությամբ ձնածածկ են: Այնումենայնիվ, ես որոշեցի գնալ՝ վաղօրոք առաջ ուղարկելով իմ կազակներից մեկին: Կազակն առաջացավ, սակայն չհասցրեց ինձանից 100-150 քայլ հեռանալ, երբ ձիու հետ թաղվեց ձյան մեջ: Նա մեծ ջանքեր գործադրեց դուրս գալու համար: Ես մեկ այլ ուղղություն ընտրեցի, որտեղ, իմ կարծիքով, ձյունն ավելի պնդացած էր, և այդ ուղղությամբ ուղարկեցի մեկ այլ կազակի, սակայն նրա հետ նույնը տեղի ունեցավ: Ես համոզվեցի, որ փոխգնդապետ Պլատոնովն իրավացի էր:

Ուղեկալներն ու պահակակետերը տեղակայված էին բաց տեղանքում: Ծիշտ է, վատ եղանակի դեպքում նրանց հաճախակի էին փոխարինում, սակայն նույնիսկ նման կարճատև ժամանակում մարդիկ ինչպես ուղեկալներում, այնպես էլ պահակակետերում գտնվում էին բացառապես ծանր պայմաններում: Ամեն անգամ զգալի թիվ էին կազմում վերջույթների ցրտահարությունները: Ի լրումն այս ամենի՝ վառելիք գրեթե չկար, որը մեծ դժվարությամբ բերվում էր Խանազիր գյուղից, իսկ դիրքեր տեղա-

փոխելն ավելի դժվար էր, հատկապես՝ ձյունամրրիկների ու ձյունահողմերի ժամանակ: Շեյխան վերադառնալով՝ ես հեռագիր ուղարկեցի կորպուսի շտաբի պետին և շտաբապահի պահակային ջոկատի ծանր դրության մասին՝ խնդրելով անհապաղ ուղարկել վաչկավրաններ [յուրդ]: Ես գիշերեցի Շեյխանում՝ փոխգնդապետ Պլատոնովի մոտ, իսկ հաջորդ օրը վերադարձա: Չեկանիով անցնելիս տեղեկացա, որ այնտեղ է գտնվում կորպուսի ժամանակավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դե-Վիտտը: Ես գնացի նրա մոտ, ներկայացա և զեկուցեցի Դերիկի ջոկատի, հատկապես՝ այդ շտաբապահի ծանր վիճակի մասին: Ինձ զարմացրեց, որ ես որևէ պատասխան կամ խորհուրդ չստացա: Այդ ամենը նա լսեց բացարձակապես անտարբեր:

5-րդ գնդի հրամանատարը մեզ հրավիրեց իրենց գնդի ճաշարան՝ ճաշի: Դերիկ եկա երեկոյան: Գեներալ Դե-Վիտտն ինձ վրա անբարեհաճ տպավորություն թողեց իր մտայնությամբ և լռակյացությամբ: Ճաշից հետո նա մեկնեց Դերաբի, իսկ ես՝ Դերիկ: Ես այդպես էլ չէի կարողանում հանգստանալ՝ հիշելով այդ շտաբապահի դժվարությունները և գրկանքները, իսկ գլխավորը՝ ինձ վրդովեցնում էր մարդկանց աննպատակ տանջելը, քանի որ ենթադրում էին, որ մեծաքանակ հակառակորդը կարող է այդ ուղղությամբ հարձակվել: Կրկին հեռագիր ուղարկեցի կորպուսի շտաբի պետին՝ խնդրելով արագացնել ծածկասայլեր ուղարկելը:

Իմ շրջայցից հետո կազմեցի մանրամասն զեկուցագիր, որն ուղարկեցի կորպուսի հրամանատարին. «Կորպուսի № 6 հրամանի համաձայն՝ իմ հրամանատարության տակ գտնվող ջոկատի զորքերը տեղակայվել են նախատեսված վայրերում, բացառությամբ 6-րդ գնդի (այդ ջոկատը), որը չկարողացավ զբաղեցնել իմ կողմից նրա համար նշանակված պահակակետը՝ Միրկամիր-դաղ – Դիլադիրա և Կեկե գյուղերից արևելք՝ մինչև բարձունքներն ընկած լեռնաշղթայի երկայնքով: Այդտեղ՝ Ռաշվա գյուղից երեք վերստ դեպի արևմուտք, հատվում են ճանապարհները, քանի որ առաջնագծի և նշված գծի միջև ընկած տեղանքը՝ ակոսված խոր գառիվայր ձորերով ու պատված խոր ձյունով, ինչպես նաև որևէ շինության ու ճանապարհների բացակայությունը, մշտական ձյունամրրիկները ոչ միայն հնարավորություն չեն տալիս որևէ բան հասցնելու պահակային ջոկատին, այլև մարդիկ ի գորու չեն նույնիսկ անցնելու մեր և հակառակորդի դիրքերի միջև ընկած հատվածով՝ Չակմակ-դաղ և Կուխ-թափասի լեռների բարձունքների գծով: Դրանք պատված են խոր, գառիթափ ձորերով, որոնց հատակներում հոսում են գետեր և գետակներ, որոնց խորությունը հասնում է մինչև երկու արշինի⁵⁶, իսկ լայնությունը՝ 3 սաժենի⁵⁷: Այդ գետակներում ձնհալի հետևանքով ջուրը հաճախ բարձրանում է:

Չոկատի տեղակայման վայրում, ինչպես նաև ջոկատի ու պաշտպանության սահմանի և մեր ու հակառակորդի տեղակայման վայրերում հաղորդակցության ուղիները հիմնականում որոշակի ուղղություններով անցնող արահետներն էին: Սայլերի համար ճանապարհներ, որ շատ վատն էին, կային միայն Շեյխանի և այդ ջոկատի (Շեյխանից մոտ 10 վերստ արևմուտք՝ Կարիի ուղղությամբ) պահեստագործի միջև: Այդ ճանապարհները դաշտային հրետանու համար դժվարանցանելի են, և միշտ չէ, որ մատչելի են, եթե դրանք չմաքրեն ձյունից: Բացի այդ ճանապարհներից՝ մնում են միայն արահետները, ո-

56 1 արշինը հավասար է 0,7112 մետրի:

57 1 սաժենը հավասար է 2,16 մետրի:

րոնցով մարդիկ կարող են շարժվել միայն մեկը մյուսի ետևից, ոտքով, իսկ որոշ արահետներով՝ նաև հեծյալները, սակայն այն դեպքում, եթե ձյուն չկա, և արահետներն արդեն գնալ-գալուց բացվել են: Երբ ձյուն է տեղում, առաջ շարժվելը մեծ ջանքեր է պահանջում, և նա, ում վիճակված է ճանապարհի բացել, ուժասպառ է լինում: Գետերի և գետակների վրա միայն որոշ տեղերում են հետիոտնային կամուրջներ գցվել: Ռազմաճակատի առջև առավել մատչելի տեղամասն ընկած է Չուրավա – Մոլլա-Օսման – Դալի-Իսայո – Թուրդութ – Մոլլա-Բեքիր գյուղերի և Ալթունխաթ-թափասի ու Կուժիկ-թափասի լեռների միջև: Այդ տեղամասը մի բարձրադիր սարահարթ է՝ ալիքավոր ու շատ տեղերում ծածկված քարերով, բայց և այնպես, այդտեղով տեղաշարժվելն այնքան էլ դժվար չէ, ինչպես ջոկատի տեղակայման մնացած վայրերում:

Տեղանքի նման պայմաններում և առավել ևս տարվա ներկա եղանակին մեր կողմից որևէ լայնածավալ ակտիվ գործողություն ձեռնարկելը չափազանց դժվար կլիներ, իսկ իրականում՝ նույնիսկ անհնար:

Դերիկի ջոկատի կողմից ամրացված դիրքերն սկսվում են մոտավորապես Միրկամիր-դաղ լեռից՝ ջրբաժան գետով, որը հոսում է Չուրավա և Մոլլա-Օսման գյուղերով և Շարյան գետով՝ դեպի Քյուրդ-յական գյուղ – Ուղյան-բաբա-դաղ – Աբդուրահման և Չալո-Բիշ գյուղեր:

Այդ դիրքի գլխավոր թերություններն են.

1) Այն չափազանց լայնարձակ է 8 գումարտակներից կազմված ջոկատի համար: Օդով դրա երկարությունը 23 վերստ է, իսկ եթե հաշվի առնենք գառիթափները, գառիվերները, շրջանցիկ արահետները, ոլորապտույտները, ապա կկազմի մոտ 40 վերստ: Դրա [տեղամասի] այդ անհամաչափ երկայնքը և անհրաժեշտությունը՝ պատրաստ լինելու գրավելու այն, քանի որ հակառակորդը նույն անցումում է, ոչ միայն ինձ գրկում են պահեստագործից, այլև ձախ տեղամասի պետի մոտ պահեստագործում կարող է մնալ մեկ գումարտակից ոչ ավել:

2) Հաղորդակցություն թիկունքի հետ թեև կա, սակայն շատ դժվար է, հատկապես՝ աջ տեղամասում: Բացի այդ՝ յուրաքանչյուր տեղամասից թիկունք տանող մեկ ճանապարհ կա՝ մոտավորապես տեղամասերի մեջտեղով: Այդ ճանապարհներից դուրս կանոնավոր նահանջի հնարավորություն չկա, իսկ այդ ճանապարհից մինչև թևերը նորմալ պայմաններում, եթե կռիվ չկա, 4-6 ժամ ոտքով ճանապարհ է, իսկ վատ եղանակի դեպքում՝ զգալիորեն շատ:

3) Ռազմաճակատի երկայնքով հաղորդակցությունը դժվար է, քանի որ դիրքերը կտրտված են լայնակի գառիվայր ձորերով, և ճանապարհներ չեն անցկացվել:

4) Դիրքերի մոտ գտնվում են բացարձակապես բաց մատույցներ, որոնք բոլորը հնարավոր չէ կրակի տակ պահել, քանի որ դիրքերը երկարաձիգ են, և գորքերը ցիրուցան կլինեն: Բացի այդ՝ չնայած ամրությունները տեղակայված են գերիշխող բարձունքների վրա, սակայն դրանցից հարմար է գնդակոծել միայն առջևում գտնվող բարձունքները, իսկ մինչև կիրճերի հատակը հեռավորությունները մեծ են, բացի այդ՝ ոչ բոլոր կիրճերը հնարավոր է գնդակոծել բարձունքներից:

Դիրքերի այս առանձնահատկությունը հակառակորդին հնարավորություն է տալիս աննկատ, մեծ ուժերով կենտրոնանալու ընտրված վայրի դեմ և գիշերն առանց մեծ ջանքերի գրավելու այն, քանի որ [ճակատի] երկարաձգությունը և հաղորդակ-

ցույցի ցուցանիշները հնարավորություն չեն տալիս ժամանակին օգնության հասնելու:

5) Դիրքերի թեկերը ապահովված չեն [հակառակորդի] շրջանցումից, ընդ որում, աջ թևի շրջանցումը կախված է նրանից, թե ինչպես կիրահանվի Կովկասյան 1-ին բանակային կորպուսը, իսկ ձախ թևի շրջանցումը հնարավոր չէ որևէ կերպ խափանել, քանի որ ես պահեստագոր չունեմ, իսկ շրջանցումը կարող է ճգնաժամային վիճակի մեջ դնել ձախ տեղամասը:

6) Դիրքերի քարաժայռ գետինն անչափ դժվարացնում է դիրքերի ու հաղորդակցությունների կազմակերպումը: Տվյալ պահին ստիպված են տեղավորվել նախորդների գետնափոր տնակներում, քանի որ նորերը հնարավոր չէ կառուցել, որովհետև շինանյութ չկա, ուստի ներկա տեղակայումը հարկադրական է և, իմ կարծիքով, չի համապատասխանում իրավիճակին: Գետնափոր տնակներ կան միայն ձախ տեղամասում՝ դիրքերի շրջանում, և դիրքերին մոտիկ գտնվող պահակային պահեստագորի համար: Ուղեկայների համար գետնափոր տնակներ կամ էլ այլ պատասպարաններ չկան, ինչը սառնամանիքի պայմաններում նրանց ծառայությունը դարձնում է շատ ծանր: Մարդիկ տեղավորվել են փոսերում՝ ծածկված թաց վրաններով, որոնք մնում են ձնահյուսի տակ, և անհրաժեշտ է լինում արագ դուրս գալ ձյան տակից:

Եթե հաշվի չառնվեն տարվա եղանակը, առատ ձյունը և տեղաշարժվելու դժվարությունները, և կազմակերպվի պարենի մատակարարումը, ապա կարելի է համարել, որ գլխավորապես Կարայազի-դուզի բնասահմանում կենտրոնացած հակառակորդը կարող է հետևյալ գործողությունները նախաձեռնել Դերիկի ջոկատի դեմ:

1) Հակառակորդը կարող է առաջանալ՝ շրջանցելով նրա աջ թևը: Այս առաջխաղացումը հաջողության դեպքում միմյանցից կբաժանի Կովկասյան 1-ին և 4-րդ բանակային կորպուսները, սակայն Դերիկի ջոկատին բարդ իրավիճակի մեջ չի դնի. նա կարող է դիմադրելով, գերազանց ուժերի ճնշման տակ նահանջել կարգուկանոնով: Եթե 1-ին կորպուսը գործի հակառակորդի ձախ թևի վրա, ապա նրա առաջխաղացումն այդ ուղղությամբ կարող է կանգնեցվել:

Ներկայումս տեղանքը դժվարանցանելի է նույնիսկ առանձին մարդկանց համար, և ձնահյուսերը այդ շարժումը դարձնում են քիչ հավանական, իսկ հրետանու և գումակի ու մեծ զանգվածների համար, կարելի է ենթադրել, նույնիսկ անհնար:

2) Հակառակորդը կարող է հարձակվել աջ տեղամասի կենտրոնի վրա՝ ընդհանուր ուղղություն ունենալով Շեյխան գյուղը: Այդ դեպքում նա հարկադրված կլինի հաղթահարել դժվարմատչելի տեղանքը, և եթե աջ տեղամասը ժամանակին մոտեցնի պահեստագորը, իսկ ձախը նրան աջակցի, ապա հակառակորդը կհայտնվի դժվար դրության մեջ: Հակառակորդն այդ ուղղությամբ առանձապես շահ չի ունենա, քանի որ Դերիկի ջոկատը կարող է կանոնավոր նահանջել: Դժվարամատչելի տեղանքը և ձնահյուսերը հակառակորդի այդպիսի առաջխաղացումը դարձնում են քիչ հավանական, եթե ոչ անհնար:

3) Հակառակորդը կարող է առաջանալ Չորավա-Մոլլա-Օսմանով դեպի Ուդյան-բաբա՝ ձախ տեղամասի աջ թևը, կամ երկատելով Դերիկի ջոկատի երկու տեղամասերը: Այս դեպքում հակառակորդը կարող է ծածուկ շարժվել կիրճերով, սակայն եթե Ուդյան-բաբ-դաղը և շրջակա դիրքերը ժամանակին զբաղեցվեն, և ժամանակին հասցվի տեղամասային պահեստագորը, իսկ աջ տեղամասն աջակցի, ապա հակառա-

կորդին կարելի է համառ դիմադրություն ցույց տալ: Անհաջողության դեպքում Դերիկյան ջոկատը, ամեն քայլի մարտնչելով, կարող է կարգուկանոնով նահանջել: Հակառակորդի նման առաջխաղացումը հնարավոր է, սակայն մեծ դժվարությամբ:

4) Հակառակորդը կարող է առաջանալ դեպի Մոլլա-Բեքիր-Թուրդուր՝ դեպի ձախ տեղամասի ձախ թևը, կամ ձախ տեղամասի ձախ թևը շրջանցելով: Տեղաշարժման դժվարությունների տեսանկյունից հակառակորդի գործողություններն այս ուղղությամբ համեմատաբար հեշտ են. այստեղ նրա հրետանին կանցնի: Եթե ձախ տեղամասը ժամանակին դիրքեր գրավի, ապա կարող է դիմադրել, սակայն ձախ թևի շրջանցումը կանխելու համար անհրաժեշտ է ունենալ զգալի պահեստագոր, ինչի համար կպահանջվի, եթե հնարավոր լինի, խիստ թուլացնել աջ թևը (Ուլյան-բաբադաղ): Այդ ուղղությամբ հակառակորդի գործողությունների դեպքում ձախ տեղամասը պետք է խիստ աչալուրջ և զգույշ լինի, քանի որ հակառակորդի հաջող հարձակման դեպքում այն կարող է կտրվել դեպի Դերիկ նահանջի միակ ճանապարհից:

Այսպես վերլուծելով, թե ինչ կարող է նախաձեռնել հակառակորդը, կարելի է եզրակացնել, որ նրա համար առավել հարմարը և Դերիկի ջոկատի համար ամենավտանգավորն այն է, եթե [հակառակորդը], դուրս գալով Կարա-յազի-դուզի բնասահմանից Չորավայի կողմերը, շարժվի Մոլլա-Բեքիր-Թուրդուր՝ դեպի Դերիկյան ջոկատի ձախ թևը, կարող է նաև միաժամանակ շարժվել Չորավայից դեպի Մոլլա-Օսման-Մամուտալ-Ուլյան-բաբադաղ՝ դրանով շեղելով ձախ տեղամասի աջ թևի պահեստագորին: Իբրև անուղղակի հաստատում այն բանի, որ հակառակորդը կարող է շարժվել հենց այսպես, կարող է ծառայել այն, որ աջ տեղամասի դիմաց հաճախ են հայտնվում նրա հետախույզները:

Այս դեպքում ողջ ծանրությունն ընկնում է ձախ տեղամասի վրա, իսկ աջը, որը բաժանված է դժվարանցանելի տեղանքով և զբաղեցնում է կարևոր տեղամաս, գտնվելով հեռվում, ի գորու չի լինի էական օգնություն ցուցաբերելու, որպեսզի նման պայմաններում կատարի Դերիկի ջոկատին տրված առաջադրանքը՝ հակահարված տալ հակառակորդին Միրկամիրի լեռնանցքից մինչև Բիշե գյուղը: Անհրաժեշտ է իրականացնել աչալուրջ պահակային և հետախուզական ծառայություն, հասցնել ժամանակին զբաղեցնել դիրքերի համապատասխան տեղամասերը և ունենալ բավականաչափ պահեստագոր, որպեսզի, իրավիճակից ելնելով, ուժեղացվեն դիրքերի այս կամ այն հատվածները:

Պահպանության և հետախուզության աչալրջության հասնել, իհարկե, հնարավոր է, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ մարդիկ ուժասպառ չլինեն և պահպանեն ուժերը, իսկ դա չափազանց դժվար է, քանի որ ողջ ջոկատի պահպանության ճակատը երկայնքով 27 վերստ է, իսկ մասնավորապես ձախ տեղամասինը՝ 13 վերստ, այսինքն, համաձայն Դաշտային ծառայության կանոնադրության, եթե հաշվենք, որ յուրաքանչյուր վաշտի ընկնում է 2 վերստ, ապա ողջ ջոկատի պահակային ջոկատները պետք է կազմեն 6-7 գումարտակ, իսկ ձախ տեղամասինը՝ 3 գումարտակ:

Պահպանության մեծ ճակատը և դժվարանցանելի տեղանքը պահանջում են մեծաթիվ վերակարգեր, բայց և այնպես ստիպում են ունենալ նոսր պահպանություն, որը դժվարացնում է պահակային գործառնախնի պարենի մատակարարումը, որը մարդիկ հարկադրված են լինում տեղափոխել իրենց ուժերով, ինչը նրանց խիստ ուժասպառ է անում, ուստի պահպանության աչալրջությունը զգալիորեն թուլանում է:

Ժամանակին զբաղեցնել դիրքերի անհրաժեշտ տեղամասերը կարելի է այն դեպքում, եթե զորամասերը մոտիկ են գտնվում դիրքավորման համար նախատեսված տեղամասերին, և դեպի տեղամասեր տանող բավականաչափ լավ ճանապարհներ կան:

Դերիկի ջոկատի շինություններն ամբողջությամբ չեն համապատասխանում զինվորների տեղաբաշխմանը՝ դիրքերը զբաղեցնելու համար, և զորքերը միշտ չէ, որ կարող են նախատեսված տեղամասերում գտնվել, քանի որ 15 վաշտից 6-ը⁵⁸ [գտնվում են հեռու]:

1-ին վաշտը Դերիկում իմ տրամադրության տակ գտնվող պահեստագորն է, որ մշտապես կատարում է պահակային ծառայություն և ցրված է դիրքերի առջևում: Դիրքի տեղամաս տանող՝ բավարար վիճակում գտնվող ճանապարհներ գրեթե չկան: Ունենալ բավականաչափ պահեստագոր, որը ես համարում եմ ամենակարևորը, վերը նշված պատճառներով գրեթե անհնար է, իսկ գլխավոր արգելքը պահակագորի անհամեմատ ծանր ծառայությունն է:

Պահպանությունը կատարվում է հետևյալ կերպ.

1) Աջ ջոկատը (6-րդ գունդը) Ծեյխան գյուղում տեղակայում է առաջապահ (2 գումարտակ, 4 թնդանոթ և 1 հարյուրյակ), որից 15-18 վերստ դեպի առաջ ուղարկվում է 1 գումարտակից կազմված պահակային ջոկատ: Պահակային ջոկատը՝ 1 գումարտակ, պետք է զբաղեցնի հետևյալ ճակատը՝ Դիլադիր և Կեկե գյուղերից արևելք գտնվող Միրկամիր-դաղ լեռից ձգվող լեռնաշղթան մինչև բարձունքը՝ ներառյալ Ռաշվա գյուղը, որից 3 վերստ դեպի արևմուտք, որտեղ ճանապարհների խաչմերուկն է, պահակային ջոկատը զբաղեցնում է 3 վաշտային տեղամաս և 1 վաշտ թողնում է որպես պահակային պահեստագոր:

Այդպիսի տեղաբաշխումը հատուկ դժվարություններ չի առաջացնում, սակայն նշված ճակատը չափազանց առաջ է տարված, և այդ տեղամաս առաջանալ ու պահակային դետերի կողմից ծառայություն կատարել լեռնային տեղանքով, որը կտրտված է խոր կիրճերով և ծածկված է խոր ձնահյուսերով, ահռելի աշխատանք է պահանջում, իսկ միմյանց հերթափոխողները ստիպված են կատարել այդ աշխատանքը ամեն անգամ վերակարգ գնալով կամ վերադառնալով:

Որևէ տեսակի շինության բացակայությունը, ձնահյուսերը, սառնամանիքը, նույնիսկ հակերով պարեն և վառելիք հասցնելու անհնարիությունը, մեծ տարածության վրա վառելիք հավաքելու անհրաժեշտությունը, մոտակայքում ջրի բացակայությունը և դժվարությամբ հայթայթված վառելիքը, ձյունը ջրի համար հալելու անհրաժեշտությունը էլ ավելի են դժվարացնում այդ ճակատում պահակային ծառայությունը: Առանց աջ տեղամասի պաշտպանությունը վնասելու, ներկա դաժան պայմանները հաշվի առնելով, կարելի է ետ քաշել պահպանության գիծը մինչև դիրքերը, քանի որ անհավանական է, որ հակառակորդը կարող է հանկարծակի մեծ ուժերով հայտնվել աջ տեղամասի դեմ, իսկ փոքրաթիվ խմբերը պահակային ջոկատը կարող է հաջողությամբ ետ մղել մինչև ողջ առաջապահի հասնելը:

2) Համաձայն կորպուսի № 12 հրամանի՝ ա) ձախ ջոկատը՝ մեկ գումարտակ, 2 թնդանոթ և 4 հարյուրյակ, տեղակայվում է Մամուտայ գյուղում, իսկ առաջապահից առանձնացվում է 2 վաշտից կազմված պահակային ջոկատ, որը զբաղեցնելու է

58 Այդպես է փաստաթղթում:

հետևյալ ճակատը՝ Ռաշվա գյուղից 3 վերստ արևմուտք գտնվող ճանապարհների հատման գծից մինչև Մոլլա-Օսմանի և Մամուտալի կողքով հոսող գետակը, ք) Դալի-խալոյում տեղակայվում է 2 վաշտից կազմված պահակային ջոկատ, որից մեկ վաշտ զբաղեցնում է դիրքը մինչև Մոլլա-Օսմանի և Մամուտալի կողքով անցնող գետակը, մինչև Մոլլա-Բեքիր, գ) [զ] հարյուրյակը տեղակայվում է Մերկե-հիլում և զբաղեցնում է Մոլլա-Բեքիրից մինչև Մերկե-հիլ ընկած տարածքը: Այսպիսով, առավել ամուր պաշտպանված է աջ թևի տեղամասը, իսկ առավել թույլ և վտանգի ենթարկված՝ ձախը:

Մոլլա-Բեքիրի և Դալի-խալոյի ուղղությամբ հակառակորդի հնարավոր հարձակման դեպքում առաջապահին սպառնում է կտրված լինելու վտանգը, և եթե նա ժամանակին չնահանջի, ապա կարող է հայտնվել ճգնաժամային վիճակում, հատկապես՝ անբարենպաստ եղանակին, երբ արահետները կփակվեն, և հրետանին ի զորու չի լինի առաջանալու: Չախ թևն ուժեղացնելու հնարավորություն չկա, քանի որ հետևակի մոտ կեսը և հեծելազորի կեսից ավելին մշտական ծառայության մեջ են, պահպանության գոտին երկարաձգված է և չափազանց առաջ է եկած, ուստի անչափ թույլ է ու նոսր, [թույլ է նաև] նրա գորամասերի փոխադարձ աջակցությունը: Դժվար է հատկապես Մամուտալից հյուսիս ընկած լեռներում, որոնք ամբողջությամբ ձյունածածկ են, այդ պատճառով հնարավոր է հակառակորդի կողմից պահակակետերի գրավումը: Պահակային ծառայությունը զբաղեցնում է տեղամասի մոտ կեսը, իսկ նրան փոխարինած մյուս մասը հանգստի կարիք ունի:

Մարտի դեպքում դժվար կլինի օգտագործել պահպանությունում գտնվող 6 վաշտերը, որոնք կարող են գնալ տարբեր ուղղություններով, և դիրքեր գրավելու համար տեղամասի պետի մոտ կարող է մնալ միայն 9 վաշտ, որոնց զգալի մասը պետք է առանձնացնել որպես պահեստագոր:

Նշված անբարենպաստ մարտական պայմաններից զատ՝ պահպանությունն ունի այլ մեծ թերություններ ևս. Մամուտալում միայն 1 վաշտ է տեղակայված շինությունում, առաջապահի մնացած մասը մնում է վրաններում, ընդ որում, հրետանին ու կազակները հերթափոխ չունեն, ինչը չի կարող բացասաբար չազդել՝ սանիտարական իմաստով, [բացի այդ] պահակային զորամասերի հերթափոխի գնալը, վերադառնալը և վառելիքի հայթայթումը, դետրային ծառայությունը մեծ ժամանակ են խլում և շատ են հոգնեցնում: Պարենի, անասնակերի, վառելիքի մատակարարումը անչափ դժվար է, իսկ վատ եղանակի դեպքում նույնիսկ հակերով՝ անհնար, և մարդիկ ստիպված են իրենք տեղափոխել, իսկ տեղական որևէ միջոց չկա, նույնիսկ չորացած խոտը, որով կերակրում էին ձիերին, այժմ խոր ձյան տակ է: Բացի պահակային զորախմբի մատակարարումից՝ անհրաժեշտ է մատակարարում իրականացնել 30 վերստի վրա գտնվող պարենային խանութից գնդի շտաբ, իսկ ձիակազմը և եզները թուլացել են թերսնումից: Կարծում ենք, որ վերը նշված թերությունները կարելի էր հիմնականում հաղթահարել, եթե ձմռանը Ռաշվա – Մամուտալ – Թուրդութ – Կաֆման (կամ Սուֆիան) գիծը հսկող մարտական պահպանությունը ետ քաշեինք: Այդ դեպքում կկրճատվեր պահակային ծառայության համար նախատեսված վերակարգը, հնարավոր կլիներ իրականացնել ծայրաստիճան անհրաժեշտ աշխատանքները՝ կատարելագործել դիրքերն ու ճանապարհները, և ձևից մաքրել խրամատներն ու ճանապարհները: Հնարավոր կլիներ գորքի մի մասն այնպես տեղակայել, որ նրանք հնարավոր

Վեյն համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

րություն ունենային անհրաժեշտության դեպքում ժամանակին դիրքեր գրավելու, իսկ մյուս մասը՝ թողնել որպես պահեստագոր, և ծառայության դժվարությունները, պարենի, անասնակերի և վառելիքի մատակարարումը զգալիորեն կթեթևանային, իսկ սանիտարական դրությունը կշահեր:

Ընդհանուր առմամբ մեր դիրքերի տեղակայման ոչ շահավետ կողմերը հետևյալներն են.

1) Հակառակորդին հակահարված տալու դիրքը չափազանց մեծ է և երկայնաձիգ է Դերիկի ջոկատի համար, և՛ ճակատի, և՛ թիկունքի հետ հաղորդակցությունը շատ դժվար է, և բավարար թվով գոհացուցիչ հաղորդակցության ուղիներ մշակված չեն:

2) Ռազմաճակատի մեծ երկայնքի հետևանքով ենթադրելի է, որ դժվար է այնտեղ ամբողջությամբ տեղակայվել, իսկ դիրքեր գրավելու համար բավականին շատ ժամանակ կպահանջվի, ուստի անհրաժեշտ է գորամասերն այնպես տեղակայել, որպեսզի նրանք ժամանակին հասցնեն գրավել նախատեսված տեղամասերը, ինչը ձախ տեղամասում հնարավոր չէ ներկա տեղակայման դեպքում, քանի որ գորքի գրեթե կեսը պահակային ծառայություն է կատարում [առաջնագծից] բավականին հեռու:

3) Անհամաչափ ձգված դիրքը և պահակային գորախմբերի չափազանց շատ վերակարգերը ինձ հնարավորություն չեն տալիս բավականաչափ պահեստագոր ունենալու ձախ տեղամասում, որտեղ այն շատ է անհրաժեշտ, քանի որ հավանական է, որ հակառակորդը կփորձի շրջանցել ջոկատի ձախ թևը:

4) Պահակային գորախումբը չափազանց առաջ է քաշված, ձգված է ու նոսր, բայց, չնայած դրան, մեծ վերակարգ է պահանջում, հատկապես՝ ձախ տեղամասում, և շատ հոգնեցուցիչ է ու ձախ տեղամասի պետին զրկում է բավականաչափ գորք ունենալու հնարավորությունից՝ [դիրքեր] գրավելու և պահեստագոր կազմելու համար:

5) Մոլլա-Օսմանի և Մամուտալի շրջանում տեղակայված առաջապահն արդյունավետ չէ պահպանության համար, սակայն հակառակորդի՝ Մոլլա-Բեքիր – Թուրդուր ուղղությամբ հարձակվելու դեպքում կարող է մեկուսացման վտանգի ենթարկվել, և շատ դժվար է նրա մատակարարումը պարենով, անասնակերով և վառելիքով, բացի այդ՝ նրա [գորքի] գտնվելը վրաններում ծայրահեղ վտանգավոր է հիգիենայի տեսանկյունից:

6) Ճանապարհների բացակայությունը, ձնահյուսերը, դժվարանցանելի տեղանքը և միայն վաղօրոք բացված արահետներով տեղաշարժվելը հակառակորդի հարձակման դեպքում ծայրաստիճան դժվարացնում են առաջավոր գորամասերի նահանջը, հատկապես՝ առաջապահի հրետանու, շատ հոգնեցուցիչ են պահակային ստորաբաժանումների հերթափոխի ու դետքային ծառայություն կատարելու ժամանակ և դժվարացնում են նաև պահակային ծառայություն կատարող գորամասերի միջև կապը և միմյանց փոխօգնության հասնելը:

7) Ձախ տեղամասի պահակային ծառայության մեծ վերակարգը և ուժասպառ անող պահակային ծառայությունը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտ չափով իրականացնելու աշխատանքներ՝ կատարելագործելու դիրքերը, բարելավելու հաղորդակցությունը և ձնից մաքրելու խրամատներն ու ճանապարհները, քանի որ մարդկանց կեսը բացակա է, իսկ մյուսը երկարատև հանգստի կարիք ունի:

8) Այդ պայմանները հնարավարություն չեն տալիս գորքերի հետ անցկացնելու որևէ պարապմունք և կատարելագործելու մարտական պատրաստականությունը այն դեպքում, երբ նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին պահեստային գումարտակներից ժամանել են մեծ թվով բացարձակապես չպատրաստված զինձառայողներ որոնց զինավարժությամբ անհրաժեշտ է զբաղվել:

9) Առաջնագծի զորամասերի մատակարարումը հնարավոր է միայն մեծ դժվարությամբ, հակերով, սակայն ոչ միշտ և ոչ ամենուր: Այն պահանջում է [բեռնակիր] կենդանիներ, ընդ որում, առաջին՝ [բեռնակիր] կենդանիները անհրաժեշտ են խանութներից բեռները տեղափոխելու համար, և երկրորդ՝ ձիերը գրեթե ցորեն չեն ստանում և զրկվել են նույնիսկ չոր խոտից, որով կերակրվում էին անասնակերի փոխարեն և ավելի ու ավելի վատ են աշխատում՝ ուշացնելով մատակարարումը, խախտելով հաշվարկները: Մարդիկ ստիպված են լինում մեծ ուժեր վատնելով փոխարինել կենդանիներին՝ պարենամթերք մատակարարելու համար:

10) Վերը նշված պատճառներով մարդիկ պահակային ծառայության ժամանակ խիստ ուժասպառ են լինում, սառնամանիքի պայմաններում ապրում են վրաններում առանց վառելիքի, և թերի են սնվում, ինչը ծայրահեղ վատ է անդրադառնում նրանց առողջության վրա և կարող է հանգեցնել զանգվածային հիվանդությունների:

Իհարկե, քանի որ դա է պահանջում ռազմական իրադրությունը, գորքերը գրկանքի և զոհերի առջև կանգ չեն առնի, սակայն վերը շարադրվածն ինձ ստիպում է անհանգստանալ՝ Դերիկի ջոկատը կարո՞ղ է արդյոք կատարել իրեն տրված առաջադրանքը: Ուստի ես իմ բարոյական ու ծառայողական պարտքն եմ համարում գեկուցել այդ մասին Ձերդ Գերագանցությանը՝ հնարավորության դեպքում կրճատելու ներկա դիրքավորման թերությունները: Խնդրում եմ Ձերդ Գերագանցությանը ձմռանը թույլատրել:

1) Պարտադիր պայման չհամարել Մամուտալում երեք զորատեսակներից առաջապահի տեղակայումը,

2) Պահակային պահպանությունը տեղակայել Միրկամիր-դաղ լեռան, աջ տեղամասինը՝ Ռաշվա – Մամուտալ – Թուրդութ – Կավման գծով:

Կարծում եմ, որ հնարավորության դեպքում պետք է պահպանել ուժերը մինչև գարուն, երբ կարելի է սպասել խոշոր մարտական գործողությունների, ուստի չպետք է վատնել ուժերն ու եռանդը բնության դեմ պայքարում մինչև լիակատար ուժասպառ լինելը՝ հակառակորդին որևէ վնաս չտալով:

Եթե դա հնարավոր էր մինչև 66-րդ հետևակային դիվիզիայի զորամասերի փոխարինումը, երբ եղանակի ու տեղանքի պայմանները դեռևս հնարավորություն էին տալիս հակառակորդին իրականացնելու ակտիվ գործողություններ, ապա այժմ, երբ հակառակորդի ակտիվ գործողությունները մեծ ուժերով գրեթե անհնար են, և բոլոր ջանքերը ստիպված ենք ուղղել գոյության համար մղվող ծանր պայքարին՝ մասամբ ապրելով բաց երկնքի տակ, դժվարությամբ պարեն հասցնելով, մեծ տարածքների վրա հայթայթելով վառելիքը ձյան տակից, դժվարությամբ դուրս գալով ձնահյուսների տակից, կարծում եմ, որ ավելի օգտակար կլինի բոլոր ջանքերը կենտրոնացնել դիրքերի կատարելագործման և մարտական պատրաստականության ուղղությամբ՝ նախապատրաստվելով ապագա մարտական գործողություններին:

Գեներալ-մայոր Նազարբեկով»:

Իհարկե, կորպուսի հրամանատարը որևէ ուշադրություն չդարձրեց իմ գեկու-
ցագրին, քանի որ իմ խնդրանքը չընդունվեց: Ուստի Դերիկի ջոկատը շարունակեց
կանգնած մնալ նույն վայրերում, իսկ ձմռան սարսափները մարդկանց համար ավելի
ու ավելի զգալի էին դառնում, քանի որ սառնամանիքները, բուքերը, մշուշները, ձյու-
նամրրիկները և քամիներն ավելի ու ավելի հաճախակի էին դառնում: Սառնամանիք-
ները հասնում էին մինչև -25° -ի: Չնայած այդ դժվարություններին, ուշադրություն
չդարձնելով եղանակային պայմաններին, հակառակորդի ուղղությամբ և ջոկատների
ու 1-ին կորպուսի հետ կապը պահպանելու համար հետախուզությունն իրականաց-
վում էր ամեն օր: Հասկանալի է, որ գրեթե անդադար ձյունամրրիկների, մշուշների և
առատ ձյան հետևանքով հետախույզների առջև դրված առաջադրանքները չէին կա-
տարվում: Միայն հազվադեպ էր հետախույզներին հաջողվում մոտենալ հակառա-
կորդի դիրքերին և հայթայթել քիչ թե շատ ստույգ տեղեկություններ նրա մասին:
Հատկապես դժվար էր կապ պահպանել առաջին կորպուսի հետ: Միրկամիրի լեռ-
նանցքում մեծ մասամբ մոլեգնում էին ձյունամրրիկները: Այդ շրջանում ձյան մեծ կու-
տակումների հետևանքով հետախուզությունը կատարվում էր դահուկներով: Դահու-
կորդներին տրվում էր մի քանի օրվա պարեն, և այդ հետախուզությունը տևում էր ե-
րեք-չորս օր: Կազակները մեծ մասամբ թողնում էին ձիերը, քանի որ ձիերը խրվում
էին ձյան մեջ, և հետախուզությունը կատարում էին հետիոտն:

Սանջանի ջոկատի համար տեղանքն ավելի մատչելի էր, այնտեղ բուքը, ձյունա-
խառն մրրիկներն այնքան էլ մոլեգին չէին, և ձյունը համեմատաբար քիչ էր: Սանջանի
ջոկատը հետախուզությունը կատարում էր առավել մեծ զորամասերով, նույնիսկ եր-
բեմն ջոկատը կազմվում էր երեք զորատեսակներից: Սակայն նրանք էլ սակավ արժե-
քավոր տեղեկություններ էին հաղորդում. հայտնաբերում էին այն, ինչ վաղուց հայտ-
նի էր: Ցավոք, մեծ մասամբ այդ հետախուզություններն ավարտվում էին զգալի թվով
մարդկանց վերջույթների ցրտահարությամբ: Հատկապես նրանք շատ էին Հայկական
դրուժինայում: Դա, իմ կարծիքով, տեղի էր ունենում այն պատճառով, որ նրանց մոտ
քիչ էր տաք հագուստը, հատկապես՝ կոշիկը, քանի որ ղեկավար պետերը նման հար-
ցերում այնքան էլ փորձառու չէին: Շարային վաշտերում հրաձիգները 250-300 մար-
դու համար ունեին միայն 60 զույգ վալենկաներ [թաղիքե ոտնամաններ]: Կարելի է
ենթադրել, որ Հայկական դրուժինայում ավելի քիչ կար: Ռեկոգնոսցիրովկայի ժամա-
նակ կործանարար ազդեցություն ունեին լեռնային գետակները, որոնք նրանք հար-
կադրված էին հաղթահարել: Գետանցումները կատարվում էին -20° սառնամանիքնե-
րի ժամանակ և չառած գետերով: Դրան գումարած՝ անփորձության հետևանքով
շատերը գետակներն անցնում էին առանց կոշիկները հանելու:

[1915 թ.] դեկտեմբերի 19-ին հայտարարվեց Գլխավոր հրամանատարի⁵⁹ հրա-
մանագիրը քրդերի մասին՝ նրանց մեր կողմը գրավելու և հայերի ու պարսիկների հետ
[քրդերի] թշնամությունը վերացնելու համար: Իհարկե, դա ցանկալի կլիներ ինչպես
հայերի, այնպես էլ քրդերի համար: Ես ինքս պատերազմի ժամանակ քիչ ջանքեր չէի
գործադրում, սակայն այդ խնդիրը անչափ դժվար էր իրականացնել, հատկապես՝
կարճ ժամկետում: Քրդերի մշակույթը շատ ցածր մակարդակի վրա էր՝ կողոպուտնե-
րը, սպանությունները, հատկապես՝ քրիստոնյաների, համարվում էին ցանկացած

59 Նկատի ունի Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Նիկոլայ Ռոմանովին (կրտսեր):

քրդի հպարտությունը և քաջությունը: Բացի այդ՝ թուրքերի կողմից չափազանց ուժեղ էր ներդրված այն թշնամանքը, որը քրդերը գգում էին հայերի նկատմամբ՝ որպես այլ կրոնի ներկայացուցիչ: Ուստի սխալ էր մտածել, որ պատերազմի այդ կարճատև ժամկետում հնարավոր է փոխել քրդերի աշխարհայացքը⁶⁰: 1914 թ. Պարսկաստանում՝ Խոյում գտնվելու ժամանակ ես ազդեցիկ պարսիկներից տեղեկացել էի, որ նրանց բոլոր ջանքերը նշված ուղղությամբ որևէ արդյունք չեն ունեցել: Նրանք դրա համար հիմնել էին դպրոցներ, սակայն քուրդ երեխաներն այնտեղ մի քանի ամիս մնալուց հետո փախչում էին յուրայինների մոտ, չնայած այդ դպրոցները շատ լավ էին կահավորված, և նրանց նկատմամբ սրտալից վերաբերմունք կար:

Դեկտեմբերի 22-ին՝ իմ անդադար խնդրանքներից հետո, պահակային ջոկատի համար Շեյխան բերվեցին վաչկավրաններ [յուրտեր], բայց, ցավոք, ոչ մի կերպ դրանք չկարողացան դիրքեր տեղափոխել ձյան պատճառով: Այդպես էլ մարդիկ շարունակում էին պահակային ծառայությունն իրականացնել առանց շինությունների՝ կրելով ծանր գրկանքներ:

Դեկտեմբերի 27-ին կորպուսային պահեստագործից պահանջվեց Կովկասյան 5-րդ հրաձգային գունդը, որը՝ որպես բանակային պահեստագործ, տեղափոխվեց Մարիդամիշյան ռազմաճակատ: Գունդը տեղափոխվեց երկու մարտակարգով՝ (երկուսական գումարտակով) դեպի Դելի-Բաբա և Իշակ-Իյասի:

Դեկտեմբերի 28-ին Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի պրապորշչիկ Իվանովը, վերադառնալով հետախուզությունից, գեկուցեց, որ, հասնելով Խարաբա խան, Կիլ, Մահմուդ-կումի, գտել է թուրքերի կողմից լքված բարաքներ ու գյուղեր: Ճանապարհին հետախուզել է Չակմակ-դադի լանջին գտնվող թուրքական խրամատները: Խրամատները նշված լեռան արևելյան լանջով, դրա գագաթից դեպի հարավ՝ Ֆերնակի գյուղի ուղղությամբ, լքված են թուրքերի կողմից և պատված են ձյունով: Խրամատում գտել են գազանների՝ հավանաբար սոված շների կողմից ուժեղ կրծոտված թուրք զինվորի դիակ, որը կարծես թե թարմ է:

Դեկտեմբերի 29-ին՝ ցերեկվա ժամը 11-ին, բանակի հրամանատարը հեռագրեց, որ Թուրքեստանյան 2-րդ և Կովկասյան 1-ին կորպուսները ճակատում անցել են հարձակման: 4-րդ կորպուսին հրամայված է ուժեղացնել աչալուրջ հսկողությունը հակառակորդի նկատմամբ և պատրաստ լինել թուրքերի մասնակի կամ ընդհանուր հարձակմանը, «ինչի համար հրամայում են աջ և ձախ ջոկատներին ուժեղացնել առաջնագծի հետախուզությունը, երկրորդ՝ ուժեղացնել հսկողությունը և կապը ողջ ճակատով և խորությամբ, երրորդ՝ աջ ջոկատի պետին՝ ուժեղացնել պահակային պահեստագործը, հրետանու գոնե մի մասը կենտրոնացնել պահակային պահեստագործում, որպեսզի պատրաստ լինի դիրքեր գրավելու հակառակորդի հարձակման դեպքում, մեկ գումարտակ Խանազիրից տեղափոխել Խանիկ՝ իմ տրամադրության տակ: Չախ ջոկատի պետին՝ հատուկ ուշադրություն դարձնել Մանջանի ջոկատի կապի

60 Ինքնին հասկանալի է, որ հայերի և քրդերի զգալի մասի թշնամանքի պատճառը կրոնը չէր: Օսմանյան կայսրությունում քրդերը զգալի արտոնություններ ունեին: Դեռևս սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի օրոք հիմնականում քրդերից կազմվեցին համիդիե հեծելազորները, որոնք նպատակ ունեին վիժեցնելու հայ ազատագրական շարժումը: Դրանք մասնակցեցին 1890-ական թթ. հայկական ջարդերին: Առաջին աշխարհամարտի տարիներին համիդեականներն իրականացրին արևմտահայության կոտորածները՝ միաժամանակ զբաղվելով պատանդ հայ կանանց ու երեխաների վաճառքով: Կոտորելով հայերին՝ քրդերը տեղ դարձան ոչ միայն նրանց ունեցվածքին, այլև տարածքներին: Ցարական իշխանությունների՝ քրդերին իրենց կողմը գրավելու բոլոր փորձերն ապարդյուն անցան: Բայց դա ռուսների համար պարզ դարձավ միայն 1917 թ. սկզբներին:

պահպանմանը և ուժեղ հսկողություն սահմանել ձախ թևի վրա, ինչպես նաև պատրաստ լինել դիրքեր գրավելու՝ հակառակորդի հարձակման դեպքում: Հինգերորդ՝ հատուկ ուշադրություն դարձնել Դերիկի ջոկատի կապի պահպանմանը, ինչի համար կազմակերպել թռուցիկ փոստի գիծ: Շտապ զեկույցներն ուղարկել ցերեկվա ժամը 12-ին և երեկոյան ժամը վեցին: Հրացանի փամփուշտները և արկերը ստանալ Դերիկում և Չելկանիում: Կատարման մասին զեկույցել»:

Լուրեր էին պտտվում, որ բանակի հրամանատար, գեներալ Յուդենիչը վաղուց էր ցանկանում անցնել հարձակման, սակայն Գլխավոր հրամանատարը չէր ցանկանում դա ուժեղ սառնամանիքների, ձյունամրրիկների և ձյունաբուքերի պատճառով: Բայց այդ հարձակումն իրականացվեց գեներալ Յուդենիչի պնդմամբ, որն իր վրա վերցրեց ողջ պատասխանատվությունը⁶¹: Այս հեռագրի հիման վրա Դերիկի ջոկատի կողմից ուժեղացվեցին պահակային ջոկատները, մեծ դժվարությամբ պահակային պահեստագոր հասցվեց հրետանու դասակը, իսկ Սեյդից նույնպես ուժեղացվեց պահակային ջոկատը: Երկու առաջապահներում էլ ուժեղացվեց հակառակորդի ուղղությամբ կատարվող հետախուզությունը, որտեղ հնարավոր էր նաև հեծյալ խմբերով: Սանջանի ջոկատը ձեռնարկեց հեռավոր հետախուզություններ 3 գորատեսակներից կազմված մեծ զորամասերով, իսկ գլխավորը երկու ջոկատների՝ Պատոնոսի և Արճեշի համատեղ գործողությունն էր, որի նպատակն էր մաքրել այդ երկու բնակավայրերի միջև գտնվող քրդական շրջանը, քանի որ զինված քրդերը միշտ հարձակվում և անհանգստացնում էին ջոկատներին: Դրա համար Արճեշում կազմավորվում է ջոկատ, որը բաղկացած էր 2 վաշտերից և Հայկական 1-ին դրուժինայի 50 հեծյալներից, 1գ վաշտից և 294-րդ հետիոտն դրուժինայի 2 գնդացիներից, 4 թեթև թնդանոթներից ու 2գ հարյուրյակ կազակներից: Նրանք առաջացան դեպի Ադրաշ, Շքյաֆթկան և Խասովա⁶²: Գնդապետ Կուլեբյակինը⁶³ խնդրեց Վանից ուժեղ պարեկախումբ ուղարկել Ակ-գեդիկ լեռնանցքը:

Դեկտեմբերի 29-ին Արճեշի ջոկատը Ասր-սինակ⁶⁴ գյուղի մոտ ամբողջ օրը կատաղի մարտ էր մղում: Գեներալ Չեռնոզուբովը խնդրեց անհապաղ աջակցել Արճեշի ջոկատին, հակառակ դեպքում քրդերը կարող էին նրան դժվարին կացության մեջ դնել: [Դեկտեմբերի] 30-ին՝ ցերեկը ժամը 2-ին, կապիտան Պերեկյոստովը ջոկատով, որը կազմված էր աշխարհագրային հետիոտն դրուժինայի 3 վաշտից և 8-րդ գնդի 1 հրաձգային վաշտից՝ ընդամենը 650 սվին, 15 հեծյալներից, և ևս 70 հեծյալ պետք է

61 Հայտնի էր Ն. Ռոմանովը նույնիսկ հրամայել էր Երզրումի հաղթից զորքերը հետ քաշել: Սակայն գեներալ Ն. Յուդենիչը կարողացավ հանդգնել փոխարքային և սկսել օպերացիան (տե՛ս u Михайлов В. В., Разгром турецкой армии и овладение первоклассной крепостью. Эрзерумская операция 1915-1916 гг., «Военно-исторический журнал», М., 2006, N 8, էջ 51-52):

62 Գյուղեր Արճեշի գավառում:

63 **Կուլեբյակին Ալեքսանդր Պարֆենտի** (1871-1923-ից ոչ շուտ) ռուս ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ, բանաստեղծ, Կովկասյան 4-րդ կազակային դիվիզիայի 2-րդ բրիգադի (04.06.1915-ից) և ապա Կովկասյան 2-րդ կազակային դիվիզիայի (07.1916-ից) հրամանատար: Ժամանակավորապես նշանակվել է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար: 1917 թ. Թիֆլիսում լույս է տեսել նրա «Дверь Мгеда. Отзвуки Вана» բանաստեղծությունների գիրքը: Ա. Կուլեբյակինը բարեկամական հարաբերություններ է ունեցել Հովհաննես Թումանյանի հետ: 1919 թ. ղեկավարել է Հանաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը: Նրան էր հանձնարարված պատրաստել «Հայերի մասնակցությունը 1914-1918 թթ. համաշխարհային պատերազմին» ռազմաքաղաքական ակնարկը, որը ներկայացվելու էր Փարիզի խաղաղության կոնֆերանսին (1919): Բաքվում ծերբակալվել է բոլշևիկների կողմից և ուղարկվել Մոսկվա: Բանտարկությունից ազատվելուց հետո հաստատվել է Թիֆլիսում: Ալեի մանրամասն տե՛ս Закарян А., Александр Кулебякин и Армения, Ер., 2003:

64 Ճիշտ անվանումը՝ Ասպիհանակ - Արճեշի գավառ:

միանային ճանապարհին, Պատնոսից առաջացավ դեպի Ակ-գեղիկ լեռնանցքը և գիշերեց Դադալու գյուղում:

Կաշևան⁶⁵ գյուղ եկան Հայկական 2-րդ դրուժինան, 8-րդ հրաձգային գնդի ևս 2 վաշտ, 2 լեռնային թնդանոթ և 1 հարյուրյակ: [Դեկտեմբերի] 31-ին այդ ջոկատը Ադա-դաղի լեռնանցքով ուղևորվեց դեպի Արճեշ:

[Դեկտեմբերի] 31-ին՝ մինչև Պատնոսի ջոկատի ժամանումը, [թուրքերը] պարտության մատնվեցին Արճեշի ջոկատի կողմից, որը շարունակեց իր ընթացքը դեպի Ադա-դաղի լեռնանցքը: Որոշվեց Արճեշի և Պատնոսի ջոկատների հանգստության համար քրդերից մաքրել Արճեշի և Պատնոսի միջև ընկած շրջանը: Այդ գործողությունը պետք է բարենպաստ ազդեցություն ունենար Բերկրի-կալեի վրա: Այդ երկու ջոկատներն օպերացիայի ավարտից՝ շուրջ 80 քրդական գյուղեր ոչնչացնելուց հետո միացան Չորավա գյուղի մոտ, և հանգստից հետո Պատնոսի ջոկատը վերադարձավ Դադալու⁶⁶ գյուղ, իսկ Արճեշինը՝ Արճեշ:

Եղանակն ավելի ու ավելի էր վատանում: Ձյունամրրիկներն ու ձյունաբուքերը գրեթե չէին դադարում: Առաջնագծում գտնվող գորամասերը և հատկապես պահակային պահպանությունում գտնվողներն ու հետախուզություն կատարողները չափից դուրս դժվարություններ էին կրում: Որպես օրինակ այդ դժվարին կացության վկայակոչում եմ 2-րդ մարտկոցի հրամանատար, փոխգնդապետ Նիկիֆորովի զեկուցագիրը, որն իր դասակի հետ գտնվում էր Դերիկի աջ ջոկատի պահակային պահեստագործում. «Դիրքում գտնվող պահեստագործի դասակը զեկուցում է, որ երկրորդ օրն է, ինչ մոլեգնում է ձյունամրրիկը, ձիերն ընկնում են ձյան տակ, թամբից ազատել չի կարելի, հանդերձանքը դնելու տեղ չունենք: Պահեստագործից նույնիսկ հակերով դիրքեր գնալու հնարավորություն չունենք խոր ձյան պատճառով: Խնդրում եմ միջնորդել դասակը Շեյխան վերադարձնելու համար, քանի որ պահեստագործում մնալն անիմաստ է: Փոխգնդապետ Նիկիֆորով»:

«Իմ կողմից զեկուցում եմ, որ [ձյունից] մաքրված ճանապարհները կրկին ձյունածածկ են: Շեյխանից մինչև պահակային պահեստագործ տանող ճանապարհը ձյունածածկ է: Այսօր փորձել եմ մաքրել, սակայն մաքրված տեղամասերը վայրկենաբար ծածկվում են ձյունով: Նման պայմաններում մինչև ձյունամրրիկների ավարտը հրետանին անօգուտ է դիրքերում պահել. կտանջենք մարդկանց ու ձիերին: Փոխգնդապետ Պլատոնով»:

Բացի բնության հետ ծանր պայքարից՝ ջոկատները, ինչպես մարդիկ, այնպես էլ ձիերը խիստ տառապում էին իրենց հասանելիք պարենը չստանալուց, քանի որ համբարակային ծառայությունը ձյունամրրիկների պատճառով չէր հասցնում պարենային պահեստ բերել ջոկատների համար անհրաժեշտ ամեն բան: Օրինակ կարող է ծառայել Դուլթախի համբարակային պահեստը, որտեղից պարեն էին ստանում Դերիկի և Սանջանի ջոկատները: 1915 թ. դեկտեմբերի 31՝ ցարի չկա, խոտ չկա, դարման չկա, ձավարեղեն չկա, աղ՝ 260 փուլ, թեյ՝ 21 ֆունտ, շաքար՝ 80 ֆունտ, օճառ՝ 30 փուլ, ալյուր՝ 10 փուլ, պահածոներ՝ 17081 հատ, աղ դրած միս՝ 95 փուլ, յուղ՝ 40 փուլ, և կերոսին [թողած նավթ]՝ 33 փուլ: Պարզ է, որ պահեստում եղած պաշարի նման քանա-

65 Գոնեշվան կամ Գամեշվան (?) - Արճեշի գավառ:

66 Դադալու - Արճեշի գավառ:

:

Վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

կույթյան դեպքում ինչպես մարդիկ, այնպես էլ ձիերը չէին ստանում իրենց հասանելիք պարենը: Ուստի զարմանալի չէր, որ ձիերը սարսափելի վիճակում էին և դժվարությամբ էին առաջանում նույնիսկ լավ ճանապարհով: Հազվադեպ էր, երբ ձիերը ստանում էին հացահատիկային կեր:

4-րդ կորպուսի կազմից Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի՝ Սարիղամիշյան ճակատ տեղափոխվելուց հետո կորպուսը բացարձակապես գրկվեց պահեստագործից⁶⁷, եթե չհաշվենք աշխարհագորային դրուժինաները, որոնք ցածր մարտունակություն ունեին: Հրամանատարը, նախաձեռնելով իր հարձակումը Էրզրումի վրա, 4-րդ կորպուսը թողեց առանց պահեստագործի: Հակառակորդն ավելի վճռական լինելու դեպքում կարող էր անցնել հարձակման և դուրս գալ Սարիղամիշյան ջոկատի թիկունքը և այդպիսով խոչընդոտել մեր զորքերի առաջխաղացումը դեպի Էրզրում:

Դեկտեմբերի 30-ին Սարիղամիշյան ճակատում սկսվում են մարտական գործողությունները: Այդ օրը Արաքսի ձախ ավիին Առաջին [բանակային] կորպուսի զորախմբերը գրավեցին Մոլլա-Մելիք գյուղի շրջանում գտնվող գյուղերը և Արդուսից արևմուտք գտնվող շրջանաձև խրամատը: Երեկոյան գորամասերը, գրավելով երկու լեռնային թնդանոթ, գերելով 10 սպա, 150-ից ավելի զինձառայողներ, վերադարձան իրենց նախկին դիրքերը: Այդ օրը մենք կորցրել էինք 26 սպա և մոտ 1500 շարքայիններ: Այսպիսով, այդ ճակատում մեր առաջին մարտերը, չնայած զգալի կորուստներին, ավարտվեցին զգալի հաջողությամբ, որը, իհարկե, մեծ ազդեցություն ունեցավ մեր զորքերի ոգու վրա:

Դեկտեմբերի 31-ին Պրիմորսկյան օկրուգում գեներալ Լյախովի հետախույզների ու թուրքերի միջև տեղի ունեցավ փոխհրաձգություն:

Դեկտեմբերի 31-ի գիշերը Թուրքեստանյան [բանակային] կորպուսի ճակատում՝ Խորսյան լեռնանցքի, Ալ-դաղի, Սավինի հյուսիսի, Սևրիչայի շրջանում և Նորչենում, մերոնք դեպի իրենց քաշեցին հակառակորդի զգալի ուժեր, որից հետո նահանջեցին իրենց դիրքերը:

Դեկտեմբերի 31-ի գիշերը ստացվեց հեռագիր⁶⁸. «1915 թիւը վերջացաւ Իմ պանձալի զօրքերի անթիւ անձնուէր քաջագործութիւններով:

Թւով գերազանց ու ամեն միջոցներով հարուստ թշնամուն իմ զօրքերը ուժասպառ արին և իրենց կրծքով՝ իբրև հայրենիքի անխորտակելի վահանով՝ կանգնեցրին թշնամու արշաւանքը:

Նոր՝ 1916 թ. նախօրեակին Ես առաքում եմ Իմ ողջոյնը ձեզ, Իմ քաջարի զօրքեր: Սրտով ու մտքով Ես ձեզ հետ եմ կռիւներում և խրամատներում. հայցում եմ Ամենաբարձրեալի օգնութիւնը՝ ձեր աշխատանքների, արիութեան ու սխրագործութեան համար:

Յիշեցէք, որ առանց թշնամու վրա վճռական յաղթութիւն տանելու՝ մեր թանկագին Ռուսաստանը չէ կարող ապահովել իր համար ինքնուրոյն կեանք և իր աշխատանքից օգտվելու իրաւունք առ ի զարգացումն իր հարստութիւնների:

Այդ պատճառով համակվեցէք այն գիտակցութեամբ, թէ առանց յաղթութեան չէ կարող լինել և չի լինի հաշտութիւն: Ինչ տեսակ աշխատանք ու զոհա-

67 Օպերացիան իրականացնելու համար գեներալ Ն. Յուդենիչը կենտրոնացրել էր Կովկասյան բանակի 83 %-ը (տե՛ս Медвешкий А. Ф., Герой Эрзерума: проклятый и преданный забвению, Самара, 2005, էջ 73):

68 Նիկոլայ 2-րդի հեռագրի տեքստը մեջբերվում է «Սշակ» թերթից (Թիֆլիս, 1916, N 2, 3 յունուարի):

բերության որ պահանջէ այդ մեզանից, մենք պետք է հայրենիքին յաղթունքին տանք:

Վերջերս ես ողջունեցի մի քանի գորագործի սեպտեմբերեան կռիւներով հռչակված Մօլօղէչնօ և Վիլէյկա դաշտերում: Իմ սիրտը վկայում էր, որ բոլորը և իւրաքանչիւրը բուն տենչանքով պատրաստ են մինչև վերջ կատարել իրանց սրբազան պարտականութիւնը հայրենիքի պաշտպանութեան համար:

Ես ոտք եմ դնում Նոր-Տարին՝ հաստատ հաւատալով Աստուծոյ ողորմածութեան, հանուր ռուս ժողովրդի հոգեկան հզօրութեան, անյողողող հաստատակամութեան, և Իմ զօրքի ու նաւատորմի ռազմական քաջութեան:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրված է⁶⁹

ՆԻԿՕԼԱՅ»:

Գերագոյն գլխավոր հրամանատարության շտաբի պետը⁷⁰ հրամայեց, որ Նորին Կայսերական Մեծության ուղարկած հրամանը հենց այսօր հասնի զորքերին: Այս հրամանն ուղարկվեց բոլոր զորամասերին ու ջոկատի հաստատություններին՝ № 32-ի թվով:

Այսպէս ավարտվեց 1915 թվականը: Այդ տարվա ընթացքում Կովկասյան բանակն առանձնահատուկ հաջողությունների չհասավ՝ չնայած այն բանին, որ տարվա ընթացքում բանակի ուժերը զգալիորեն ավելացել էին, և ռազմաճակատը նկատելիորեն երկարել էր:

Այդ տարվա ընթացքում միայն 4-րդ կորպուսը և Պրիմորսկյան ջոկատը աննշան չափով առաջացան:

Նոր տարվա նախօրյակին ողջ Կովկասյան բանակը լարված սպասում էր Կովկասյան 1-ին և Թուրքեստանյան 2-րդ բանակային կորպուսների հարձակման արդյունքներին:

Ֆոնա Իվանի Նագարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 7, թ. 1-31:
Բնագիր: Ձեռագիր:

Ռուբեն Օ. Սահակյան - գիտական հետաքրքրությունների շրջանակում են Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը, կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանությունը, ինքնապաշտպանական մարտերը, հայ ոստիկանության պատմությունը:

69 Թավ տառերով նշված այս հատվածը բացակայում է Թ. Նագարբեկյանի հուշերում:
70 **Ալեքսեյ Միխայիլ Վասիլի** (1857-1918) ռուս զորահրամանատար, գեներալ-համհարզ: 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ժամանակ օժանդակել է Նիկոլայ 2-րդի գահազրկմանը: Սպիտակ բանակի կազմակերպիչներից ու Կամավորական բանակի գերագույն հրամանատար:

Summary

THE UNPUBLISHED MEMORIES OF TOVMAS NAZARBEKYAN

Military operations on the Caucasus Front from July 1914 to April 26, 1916

Copy-book 5 and 6: from August 14, 1915 to December 31, 1915

Ruben O. Sahakyan

Doctor of Historical Sciences

Key words - Tovmas Nazarbekyan, Manazkert, Andranik, Hamazasp, Qeri, D. Abatsiev, P. Oganovsky, M. Silikyan (Silikov), N. Yudenich.

In the 5th and 6th notebooks of his memoirs, General T. Nazarbekyan describes the military operations that took place on the Caucasus (Russian-Turkish) Front from August 14, 1915 to December 14.

The commander again revisits the examination of the issue of the tragic retreat of July 1915. According to him, the retreat caused great discontent among the Armenian society. News was spread that the Russian government wanted to liquidate volunteer groups, as well as refusing to give autonomy to Western Armenia. The discontent of the Armenian public and political circles was further heightened when they learned that the Russian authorities were taking effective steps to resettle the Alashkert Valley with Russians and Cossacks. This tendency became clearer under the newly appointed Viceroy and Commander-in-Chief of the Caucasus Army Nikolay Romanov-Jr. Moreover, he was taking steps to win over the Kurds fighting against the Russian army on their side. Whereas, the Kurds remained loyal to the Ottoman Empire, and more precisely, the war was a convenient occasion for them to plunder and “cleanse” the territories from the Armenians.

On November 18, 1915 the brigade of Th. Nazarbekyan was reorganized into the 2nd Caucasian Rifle Division. Th. Nazarbekyan describes the large-scale fortification works being carried out at the defense sites occupied by the Caucasian 4th Army Corps. Rumors were circulating within the troops that the units would be wintering at the locating sites, so they were thoroughly being prepared for it. Barracks, bathhouses, canteens, warehouses, etc., were being built.

In fact, Commander of the Caucasian Army, General N. Yudenich was preparing for the Erzurum (Karin) capture operation and the news of a hibernation on the spot were misinformation intended to deceive the enemy and not to reveal the offensive operation in advance. N. Yudenich was in a hurry to seize Erzurum as it became known that the Allies – the British and the French, had decided to finally halt the Gallipoli landing operation, the ultimate goal of which was the capture

of Constantinople. It was clear to N. Yudenich that the Ottoman troops stationed in the straits would be directed against the Russians in the spring of 1916, so he decided not to delay but to seize Erzurum – the last powerful Turkish stronghold in Western Armenia.

Th. Nazarbekyan notes with regret that the advancement of the division led by him was accompanied overcoming many obstacles, especially emphasizing the harsh climatic conditions and the almost non-existence of shelters, in the result of which not only humans but also pack animals suffered.

Резюме

НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте с июля 1914 г. по 26 апреля 1916 г.

Тетради 5 и 6. С 14 августа по 31 декабря 1915 г.

Рубен О. Саакян

Ключевые слова -Товмас Назарбекян, Маназкерт, Андраник, Амазасп, Кери, Д. Абациев, П. Огановский, М. Силикян (Силиков), Н. Юденич.

В 5-й и 6-й тетрадях своих воспоминаний генерал Т. Назарбекян описывает военные действия на Кавказском (русско-турецком) фронте с 14 августа по 31 декабря 1915 г.

Полководец вновь обращается к обсуждению проблем, связанных с трагическим июльским отступлением 1915 г. По его свидетельству, отступление вызвало большое недовольство в армянской общественности. Распространялись слухи, что российское правительство хочет упразднить добровольческие отряды, а также отказывается от обещания дать Западной Армении автономии. Недовольство армянских общественных и политических кругов усилилось еще больше, когда они получили сведения, что российские власти принимают активные шаги к тому, чтобы заселить Алашкертскую долину русскими казаками. Эта тенденция стала более явной при новоназначенном наместнике и главнокомандующем Кавказской армией Николае Романове Младшем. Более того, он предпринимал шаги по привлечению на свою сторону воюющих против русской армии курдов. Между тем курды продолжали оставаться верными Османской империи, а точнее, война была для них удобным поводом для грабежа и «очищения» территории от армян.

18 ноября 1915 г. бригада Т. Назарбекяна переформируется во 2-ю Кавказскую стрелковую дивизию. Т. Назарбекян описывает широкомасштабные работы по строительству укреплений, ведущиеся на защитных участках, зани-

маемых 4-м Кавказским армейским корпусом. В войсках ходили слухи, что подразделения будут зимовать в местах расположения, поэтому основательно готовились к этому. Строились казармы, бани, столовые, склады и т. д.

На самом деле, командующий Кавказской армией генерал Н. Юденич готовился к операции по взятию Эрзрума (Карина), и известия о зимовке на местах являлись дезинформацией, имеющей целью обмануть противника и заранее не раскрывать наступательные действия. Н. Юденич спешил осуществить взятие Эрзрума, так как стало известно, что союзники – британцы и французы, решили окончательно прекратить Галлиполийскую десантную операцию, конечной целью которой было взятие Константинополя. Н. Юденичу было ясно, что османские войска, расположенные в районе проливов, весной будут направлены против русских, поэтому он решил не медлить, а осуществить взятие Эрзрума, последнего мощного турецкого опорного пункта в Западной Армении.

Т. Назарбекян с болью отмечает, что зимовка возглавляемой им дивизии проходила с преодолением многочисленных препятствий, особо подчеркивает суровые климатические условия и почти полное отсутствие жилья, вследствие чего страдали не только люди, но и выючные животные.

REFERENCES

1. **Arutjunjan A. O.**, Kavkazskij front 1914-1917 gg., Jer., 1971 **(In Russian)**.
2. **Avetisyan G.**, Generaly-armjane Rossijskoj imperii, Jer., 2008 **(In Russian)**.
3. **НԱԱ**, f. 402, ts¹. 2, g. 12, t¹. 3 shrj. **(In Armenian)**.
4. **Harut'yunyan A. H.**, Kovkasyan banaki koghmits¹ 1914-1917 t¹t¹. nvachvats shrjannerum ts¹arizmi varats k¹aghak¹akanut¹yan masin, «Patma-banasirakan handes», Yer., 1968, N 1, ėj 39-52 **(In Armenian)**.
5. **Korsun N. G.**, Alashkertskaja i Xamadanskaja operacii na Kavkazskom fronte mirovoj vojny v 1915 godu, M., 1940 **(In Russian)**.
6. **Krasnyj arxiv**, Istoricheskij zhurnal, Tom dvadcat¹ shestoj, M.-L., 1928
[/http://istmat.info/files/uploads/32994/krasnyy_arhiv_26-1928.pd](http://istmat.info/files/uploads/32994/krasnyy_arhiv_26-1928.pd) (11.08.2019) **(In Russian)**.
7. **Leo**, Ants'yalits¹, Husher, t¹ght¹er, datumner, T¹iflis, 1925 **(In Armenian)**.
8. **Maslovskij E. V.**, Mirovaja vojna na Kavkazskom fronte 1914-1917 g., Pariz, 1933 **(In Russian)**.
9. **Shatirjan R.**, Kratkij ocherk armjanskix dobrovolcheskix družhin 1914-1916 gg., «Armjanskij vestnik», M., 1917, N 7 **(In Russian)**.
10. **Simonyan H. R.**, Andraniki zhamanakĕ, yerku grk¹ov, girk¹ A, Yer., 1996 **(In Armenian)**.
11. **Ustav¹ Polevoj sluzhby**. Visochajshe utverzhdjon 27 aprelja 1912 goda, S.-Peterburg, 1912
[/https://electro.nekrasovka.ru/books/6151428/pages/89](https://electro.nekrasovka.ru/books/6151428/pages/89) (24.01.2020) **(In Russian)**.